

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

9 հոկտեմբերի 2013թվականի

թիվ 68

«ՄՍԻ ԵՎ ՄՍԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» 2011 թվականի նոյեմբերի 18-ի պայմանագրի 3-րդ հոդվածին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց**.

1. Ընդունել կցվող՝ «Մսի եւ մսամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը (ՄՄ ՏԿ 034/2013):

2. Սահմանել, որ «Մսի եւ մսամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգն (ՄՄ ՏԿ 034/2013) ուժի մեջ է մտնում 2014 թվականի մայիսի 1-ից՝ բացառությամբ՝

ա) V բաժնի, որը վերաբերում է անասնաբուժական (կենդանաբուժական) պատրաստուկների, կենդանիների աճի խթանիչների (այդ թվում՝ հորմոնալ պատրաստուկների), դեղամիջոցների (այդ թվում՝ հակաբիոտիկների) պարունակության վերահսկողությանը, որն իրականացվում է սպանդային մթերքի (բացառությամբ լեւոմիցիտինի (քլորամֆենիկոլի), տետրացիկլինի խմբի եւ բացիտրացինի) արտադրողի (մատակարարի) կողմից դրանց կիրառության վերաբերյալ տրամադրված տեղեկատվության հիման վրա եւ որն ուժի մեջ է

մտնում միջպետական (տարածաշրջանային)՝ համապատասխան հետազոտությունների (փորձարկումների) ու չափումների մեթոդներ եւ կանոններ, ինչպես նաեւ նշված պահանջի կատարման ու կիրառման համար անհրաժեշտ նմուշառման կանոններ պարունակող ստանդարտների մշակումից եւ «Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում ու Ռուսաստանի Դաշնությունում տեխնիկական կանոնակարգման սկզբունքների եւ կանոնների մասին» 2010 թվականի նոյեմբերի 18-ի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 6-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված ստանդարտների ցանկում դրանք ներառելուց հետո.

բ) VIII բաժնի, որը վերաբերում է մսամթերքի արտադրության ընթացքում նատրիումի նիտրիտի 0,9 տոկոսից ոչ ավելի զանգվածային բաժնով նիտրիտային աղադրման խառնուրդների ձեռով նատրիումի նիտրիտի (կալիում) օգտագործմանը, եւ որն ուժի մեջ է մտնում 2015 թվականի փետրվարի 15-ից.

գ) XI բաժնի,

որը վերաբերում է մսամթերքի մականշվածքում մսամթերքի խմբի մասին տեղեկությունների պարտադիր նշմանը եւ որն ուժի մեջ է մտնում մսամթերքը (մսային, միս պարունակող, մսաբուսական, բուսամսային) խմբերի ներքո դասակարգելու համար անհրաժեշտ կանոններ եւ մեթոդներ պարունակող համապատասխան միջպետական (տարածաշրջանային) ստանդարտների մշակումից եւ դրանք Համաձայնագրի 6-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված ստանդարտների ցանկում ներառելուց հետո.

որը վերաբերում է մսամթերքին տրված անվանման կիրառմանը եւ որն ուժի մեջ է մտնում համապատասխան միջպետական (տարածաշրջանային) ստանդարտների մշակումից եւ դրանք Համաձայնագրի 6-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված ստանդարտների ցանկում ներառելուց հետո:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

**Բելառուսի
Հանրապետությունից**

**Ղազախստանի
Հանրապետությունից**

**Ռուսաստանի
Դաշնությունից**

Ս. Ռումաս

Բ. Սազինտաեւ

Ի. Շուվալով

Ընդունված է
Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի
2013 թվականի հոկտեմբերի 9-ի
թիվ 68 որոշմամբ

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՄՍԻ ԵՒ ՄՍԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՄՄ ՏԿ 034/2013

Սույն Տեխնիկական կանոնակարգը մշակված է «Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում տեխնիկական կանոնակարգման միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2010 թվականի նոյեմբերի 18-ի համաձայնագրին համապատասխան:

Սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանվում են Մաքսային միության մաքսային տարածքում պարտադիր կիրառման եւ կատարման՝ սպանդային մթերքի եւ մսամթերքի անվտանգությանը, դրանց արտադրության, պահման, փոխադրման, իրացման եւ ուտիլիզացման պրոցեսների անվտանգությանը, ինչպես նաեւ Մաքսային միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվող արտադրանքի ազատ տեղաշարժի ապահովման նպատակով սպանդային մթերքի եւ մսամթերքի մականշվաձքին ու փաթեթվաձքին ներկայացվող պահանջները:

Այն դեպքում, երբ սպանդային մթերքի եւ մսամթերքի վերաբերյալ ընդունվել են Մաքսային միության այլ տեխնիկական կանոնակարգեր, որոնցով սահմանվում են սպանդային մթերքի եւ մսամթերքի անվտանգությանը, դրանց

արտադրության, պահպանման, փոխադրման, իրացմանն ու ուտիլիզացման պրոցեսների անվտանգությանը, ինչպես նաև սպանդային մթերքի եւ մսամթերքի մականշվածքին ու փաթեթվածքին ներկայացվող պահանջներ, ապա սպանդային մթերքը եւ մսամթերքը, դրանց արտադրության, պահպանման, փոխադրման, իրացմանն ու ուտիլիզացման պրոցեսները, ինչպես նաև դրանց մականշումը եւ փաթեթավորումը պետք է համապատասխանեն Մաքսային միության բոլոր այն տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրանց վրա:

I. Կիրառության ոլորտը

1. Սույն Տեխնիկական կանոնակարգը մշակվել է մարդու կյանքի եւ առողջության, շրջակա միջավայրի պաշտպանության, սպանդային մթերքի ու մսամթերքի նշանակության եւ անվտանգության առնչությամբ սպառողներին մոլորության մեջ գցող գործողությունների կանխման նպատակով եւ տարածվում է Մաքսային միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվող սպանդային մթերքի եւ մսամթերքի, ինչպես նաև դրանց արտադրության, պահպանման, փոխադրման, իրացման եւ ուտիլիզացման պրոցեսների վրա:

2. Սույն Տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կանոնակարգման առարկաներն են՝

ա) սպանդային մթերքը եւ մսամթերքը՝

միս,

ենթամթերքներ,

հում ճարպ եւ դրա վերամշակումից ստացվող մթերքներ, այդ թվում՝ հալեցված կենդանական ճարպեր,

արյուն եւ դրա վերամշակումից ստացվող մթերքներ,

ոսկոր եւ դրա վերամշակումից ստացվող մթերքներ,

մեխանիկական եղանակով ոսկրահանված (լրացուցիչ ոսկրահանման ենթարկված) միս,

աղիքային հումք,

կոլագեն պարունակող հումք եւ դրա վերամշակումից ստացվող մթերքներ, (այդ թվում՝ դոնդողանյութ),

մսային եւ միս պարունակող մթերք,

մսային եւ միս պարունակող երշիկեղեն,

մսային եւ միս պարունակող կիսապատրաստվածքներ ու խոհարարական արտադրատեսակներ,

մսի եւ միս պարունակող պահածոներ,

մսային եւ միս պարունակող արգանակներ,

մսային եւ միս պարունակող չոր մթերք,

խոզի ճարպից մթերք,

մանկական սննդի համար նախատեսված սպանդային մթերք,

մանկական սննդի համար նախատեսված մսամթերք.

բ) սպանդային մթերքի եւ մսամթերքի արտադրության, պահպանման, փոխադրման, իրացման եւ ուտիլիզացման պրոցեսները:

3. Սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանվում են Մաքսային միության մաքսային տարածքում պարտադիր կիրառման եւ կատարման՝ սպանդային մթերքի եւ մսամթերքի մականշվաձեռն ու փաթեթվաձեռն ներկայացվող պահանջները, որոնք լրացնում են Մաքսային միության հանձնաժողովի՝ 2011 թվականի դեկտեմբերի 9-ի որոշմամբ հաստատված՝ «Սննդամթերքի մականշման մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 022/2011) թիվ 881 (այսուհետ՝ «Սննդամթերքի մականշման մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 022/2011)) եւ

Մաքսային միության հանձնաժողովի՝ 2011 թվականի օգոստոսի 16-ի որոշմամբ հաստատված՝ «Փաթեթվածքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 005/2011) թիվ 769 (այսուհետ՝ «Փաթեթվածքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 005/2011)) պահանջները, որոնք չեն հակասում միմյանց:

4. Սույն Տեխնիկական կանոնակարգի գործողությունը չի տարածվում հետեւյալ մթերքների, ինչպես նաեւ դրանց առնչվող պահանջների եւ պրոցեսների վրա՝

ա) սպանդային մթերք եւ մսամթերք, որն արտադրվում է քաղաքացիների կողմից՝ տնային պայմաններում եւ (կամ) անձնական օժանդակ տնտեսություններում կամ արտադրվում է այն քաղաքացիների կողմից, որոնք զբաղվում են անասնաբուծությամբ, ինչպես նաեւ միայն անձնական սպառման համար նախատեսված եւ Մաքսային միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դնելու համար չնախատեսված սպանդային մթերքի ու մսամթերքի արտադրության, պահպանման, փոխադրման եւ ուտիլիզացման պրոցեսներ.

բ) հատուկ նշանակության մսամթերք (բացառությամբ մանկական սննդի համար նախատեսված սպանդային մթերքի եւ մսամթերքի), որը պատրաստվել է սպանդային մթերքի օգտագործմամբ կամ դրա հիմքով.

գ) թռչնի միս եւ դրա վերամշակումից ստացվող մթերքներ, ինչպես նաեւ այնպիսի սննդամթերք, որի բաղադրագրի մեջ թռչնի միսը եւ դրա վերամշակումից ստացվող մթերքներն ըստ զանգվածի ընդհանուր առմամբ գերազանցում են այլ մթերատու կենդանիների սպանդից ստացված մթերքի զանգվածը.

դ) սննդային հավելումներ եւ սննդի մեջ օգտագործվող կենսաբանորեն ակտիվ հավելումներ, դեղամիջոցներ, կերեր կենդանիների համար, սննդի մեջ օգտագործելու համար չնախատեսված մթերքներ, որոնք պատրաստված են

սպանդային մթերքի օգտագործմամբ կամ դրա հիման վրա.

ե) սննդի (հանրային սննդի) ձեռնարկությունների սննդամթերք, որոնք պատրաստված են սպանդային մթերքի օգտագործմամբ կամ դրա հիման վրա եւ նախատեսված են ծառայությունների մատուցման ժամանակ իրացվելու համար, ինչպես նաեւ նշված սննդամթերքի իրացման պրոցեսներ.

զ) սննդամթերք, որն ըստ բաղադրագրի պարունակում է 5 տոկոսից ոչ պակաս մսային բաղադրամասեր.

է) Մաքսային միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դնելու համար նախատեսված՝ ոչ արդյունաբերական եղանակով պատրաստված սպանդային մթերքի եւ մսամթերքի արտադրության, պահպանման, փոխադրման ու ուտիլիզացման պրոցեսներ:

II. Հիմնական հասկացությունները

5. Սույն Տեխնիկական կանոնակարգի կիրառման նպատակով օգտագործվում են հասկացություններ, որոնք սահմանվել են Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի որոշմամբ հաստատված՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով (ՄՄ ՏԿ 021/2011) թիվ 880 (այսուհետ՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 021/2011)), «Սննդամթերքի մակնշման մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով (ՄՄ ՏԿ 022/2011), ինչպես նաեւ հետեւյալ հասկացություններն ու դրանց սահմանումները՝

«անոսկր միս»՝ կամայականորեն կտրատված տարբեր չափերի եւ զանգվածի մսի կտորներ, որոնք մկանային եւ շարակցական հյուսվածքների ամբողջություն են՝ ճարպային հյուսվածքներով կամ առանց դրանց.

«անոսկր կիսապատրաստվածք»՝ անոսկր մսից պատրաստված

կիսապատրաստվածք՝ կտորներով.

«արգանակ»՝ մսամթերք, որը պատրաստվել է սպանդային մթերքը եփելու եւ դրանում ոչ մսային բաղադրամասեր ավելացնելու կամ չավելացնելու եւ դրանից սպանդային մթերքը հեռացնելուց հետո հեղուկ ֆազի խտացման եւ (կամ) չորացման եղանակով, կամ առանց դրա.

«եփած-խորոված մսամթերք»՝ մսամթերք, որը պատրաստման ժամանակ ենթարկվել է տապակման, խորովման եւ եփման կամ այդ պրոցեսների ցանկացած համադրության.

«եփած-ապխտած երշիկեղեն»՝ արտադրատեսակ, որը պատրաստման ժամանակ ենթարկվել է նախնական ապխտման, եփման եւ լրացուցիչ ապխտման.

«եփած երշիկեղեն»՝ երշիկեղեն, որը պատրաստման ժամանակ ենթարկվել է թեթեակի չորացում ներառող ջերմամշակման, տապակման եւ եփման կամ միայն եփման.

«մանկական սննդի համար նախատեսված եփած երշիկեղեն»՝ եփած երշիկեղեն, որը նախատեսված է 3 տարեկանից բարձր երեխաների սննդի համար.

«եփած մսամթերք»՝ մսամթերք, որը պատրաստման ժամանակ ենթարկվել է թեթեակի չորացում ներառող ջերմամշակման, տապակման եւ եփման կամ միայն եփման.

«անասնաբուժական արգելամսեղիք»՝ մսեղիք, մսեղիքի մասեր եւ կենդանիների օրգաններ, որոնք անասնաբուժական պետական վերհսկողություն (հսկողություն) իրականացնող մարմինների կողմից ճանաչվել են սննդի նպատակով ոչ պիտանի եւ անհատույց վերացման ենթակա.

«խոզապուխտի պահածոներ»՝ մսային բաղադրամասերի աղաբռնվածքում պահված ոչ մսային բաղադրամասերից պատրաստված պահածոներ՝ դոնդողակի

հետ խառնված միաձույլ կառուցվածքով 50 գրամ կամ ավելի զանգվածով ջլազերծված մսի կտորներից, որոնք իրենց ձեւը պահպանում են տարայից հանելուց հետո եւ ենթակա են կտրման.

«մանկական սննդի համար նախատեսված հոմոգենացված պահածոներ»՝ մանկական սննդի համար նախատեսված պահածոներ, որոնք նախատեսված են 6 ամսականից բարձր երեխաների սննդի համար եւ պարունակում են 80 տոկոսից ոչ պակաս՝ մինչեւ 0,3 մմ չափսի մասնիկներ եւ 20 տոկոսից ոչ ավելի՝ մինչեւ 0,4 մմ չափսի մասնիկներ.

«տապակած երշիկեղեն»՝ երշիկեղեն, որը պատրաստման ընթացքում ենթարկվել է տապակման.

«տապակած մսամթերք»՝ մսամթերք, որը պատրաստման ընթացքում ենթարկվել է տապակման.

«սննդային դոնդողանյութ»՝ կոլագեն պարունակող հումքի վերամշակումից ստացված սպիտակուցային նյութի տեսքով մթերք, որն ունի դոնդողացնող հատկություն.

«ջլազերծված միս»՝ անոսկր միս՝ մկանային, շարակցական եւ ճարպային հյուսվածքների նշված հարաբերակցությամբ.

«հում ճարպ»՝ ճարպային հյուսվածքներով սպանդային մթերք՝ ներքին օրգանների մսեղիքից անջատած.

«սառեցված մսամթերք»՝ չափման ցանկացած կետում -8°C -ից ոչ բարձր ջերմաստիճանի պայմաններում սառնարանային մշակման ենթարկված մսամթերք.

«սառեցված միս»՝ չափման ցանկացած կետում -8°C -ից ոչ բարձր ջերմաստիճանի պայմաններում սառնարանային մշակման ենթարկված թարմ կամ պաղեցված միս.

«սառեցված բլոկ մսից»՝ մեկ տեսակի եւ անվանման սառեցված միս, որին

տրվել է որոշակի տեսք եւ չափս ունեցող բլոկի ձեւ.

«սառեցված բլոկ ենթամթերքներից»՝ մեկ տեսակի եւ անվանման սառեցված ենթամթերքներ, որոնց տրվել է որոշակի տեսք եւ չափս ունեցող բլոկի ձեւ.

«զելցներ»՝ ջերմային մշակման ենթարկված բաղադրամասերից պատրաստված երշիկեղեն՝ ոչ համասեռ կառուցվածքով, որն իր մեջ ներառում է մսային եւ ոչ մսային բաղադրամասեր.

«արյունային երշիկ»՝ երշիկեղեն, որը պատրաստվել է սննդային արյան եւ (կամ) դրա վերամշակումից ստացված մթերքների ավելացմամբ, որը կտրման տեղում ունի մուգ կարմիրից մուգ շագանակագույն գույն.

«լիվերային երշիկ»՝ ջերմային մշակման ենթարկված բաղադրամասերից պատրաստված՝ փափուկ թանձրության երշիկեղեն, որը կտորների բաժանելիս պահպանում է իր ձեւը եւ որի բաղադրության մեջ մտնում են եփած եւ (կամ) թերխաշ եւ (կամ) ջերմամշակման չենթարկված ենթամթերքներ.

«երշիկեղեն»՝ մսային եւ ոչ մսային մանրացված բաղադրամասերից պատրաստված, երշիկի թաղանթի, փաթեթի, ցանցի մեջ կամ այլ կերպ կաղապարված մսամթերք, որը մինչ օգտագործման համար պատրաստի լինելը՝ ենթարկվել կամ չի ենթարկվել ջերմամշակման.

«ջերմային մշակման ենթարկված բաղադրիչներից պատրաստված երշիկեղեն»՝ մսային եւ ոչ մսային մանրացված բաղադրամասերից պատրաստված երշիկեղեն, որի բաղադրության մեջ մտնում են եփած կամ թերխաշ մսային բաղադրամասեր, որոնք հետագայում՝ մինչ օգտագործման համար պատրաստի լինելը, ենթարկվել են ջերմամշակման.

«պահածոներ»՝ սպառողական տարայում հերմետիկորեն խցանափակված մսամթերք՝ մանրէազերծված կամ պաստերացված, որոնցով ապահովվում է միկրոկենսաբանական կայունություն եւ ախտածին միկրոֆլորայի կենսունակության բացակայություն, եւ որոնք պիտանի են երկարաժամկետ պահպանման համար.

«ապխտած-եփած մսամթերք (եփած-ապխտած մսամթերք)»՝ պատրաստման ընթացքում նախնական ապխտման, եփման եւ լրացուցիչ ապխտման ենթարկված մսամթերք.

«ապխտած-խորոված մսամթերք»՝ պատրաստման ընթացքում նախնական ապխտման, եփման եւ (կամ) խորովման ենթարկված մսամթերք.

«ոսկոր»՝ հում ոսկրի տեսքով սպանդային մթերք, որն ստացվում է մսի եւ ենթամթերքների ոսկրահանման արդյունքում.

«արյուն»՝ արյան տեսքով սպանդային մթերք, որը հավաքվել է սպանդի ընթացքում՝ մսեղիքի որոշակի տեսակներին դրա պատկանելիության պայմանների պահպանմամբ.

«մանկական սննդի համար նախատեսված պահածոներ՝ խոշոր կտորների մանրացված պարունակությամբ»՝ մանկական սննդի համար նախատեսված պահածոներ, որոնք նախատեսված են 9 ամսականից բարձր երեխաների սննդի համար եւ պարունակում են 80 տոկոսից ոչ պակաս՝ մինչեւ 3 մմ չափսի մասնիկներ եւ 20 տոկոսից ոչ ավելի՝ մինչեւ 5 մմ չափսի մասնիկներ.

«անոսկր (մսաոսկրային) կիսապատրաստվածք՝ խոշոր կտորներով»՝ 500 գրամից ավելի զանգվածով մսի կտորի ձեւով պատրաստված անոսկր (մսաոսկրային) կիսապատրաստվածք.

«խոհարարական արտադրատեսակ»՝ մսային (միս պարունակող) կիսապատրաստվածք, որը պատրաստման ընթացքում՝ մինչ խոհարարական լրիվ պատրաստի վիճակը, ջերմամշակվել է.

«կիսապատրաստվածք՝ կտորներով»՝ 10 գրամից ավելի զանգված ունեցող կտորի կամ կտորների ձեւով պատրաստված մսային կիսապատրաստվածք.

«կտորներ պարունակող պահածոներ»՝ պահածոներ, որոնք պատրաստված են մսային եւ ոչ մսային՝ 30 գրամից ավելի զանգվածով կտորների մանրացված բաղադրամասերից, որոնք շոգեխաշվել են իրենց հյութի,

ստուսի, արգանակի կամ դոնդողի մեջ.

«անոսկր (մսաոսկրային) կիսապատրաստվածք՝ մանր կտորներով»՝ 10-ից 500 գրամ (ներառյալ) զանգվածով մսի կտորի ձեռով պատրաստված անոսկր (մսաոսկրային) կիսապատրաստվածք.

«մանկական սննդի համար նախատեսված մսամթերք»՝ մանկական սննդի համար նախատեսված մսամթերք (վաղ տարիքի՝ 6 ամսականից մինչև 3 տարեկան, ինչպես նաև նախադպրոցական տարիքի՝ 3 տարեկանից մինչև 6 տարեկան եւ դպրոցական տարիքի՝ 6 տարեկան եւ ավելի մեծ երեխաների համար), որը համապատասխանում է մանկական օրգանիզմի ֆիզիոլոգիական պահանջներին եւ վնաս չի հասցնում համապատասխան տարիքային խմբի երեխաների առողջությանը.

«մսամթերք»՝ սպանդային մթերքի վերամշակման (մշակման) եղանակով պատրաստված սննդամթերք՝ կենդանական եւ (կամ) բուսական եւ (կամ) հանքային եւ (կամ) միկրոկենսաբանական եւ (կամ) արհեստական ծագման բաղադրամասերի օգտագործմամբ կամ առանց դրանց.

«մսային բաղադրիչ»՝ սննդամթերքի բաղադրագրի բաղկացուցիչ մաս, որը սպանդային մթերք կամ սպանդային մթերքի վերամշակման արդյունքում ստացված մթերք է, որը երշիկեղենի պատրաստման մեջ կիրառվելիս չի պարունակում ոսկոր (բացառությամբ ջերմային մշակման ենթարկված բաղադրամասերից պատրաստված երշիկեղենի, որի արտադրության տեխնոլոգիական առանձնահատկությունները թույլ են տալիս միսը եփել ոսկորով, այնուհետեւ ոսկորն առանձնացնել եւ արգանակն օգտագործել) եւ որը պարունակում է կա՛մ ոսկրային ներառուկներ (մեխանիկական եղանակով ոսկրահանված (լրացուցիչ ոսկրահանման ենթարկված) միս օգտագործելիս) կա՛մ ոսկոր (ոսկրային մսի անատոմիապես ամբողջական կտորից մթերք պատրաստելիս).

«մսային կիսապատրաստվածք»՝ 60 տոկոսից ոչ ավելի զանգվածային

բաժնով մսային բաղադրամասեր պարունակող մսամթերք, որը պատրաստվել է ոսկրով կամ անոսկր մսից՝ կտորների կամ խճողակի տեսքով՝ ոչ մսային բաղադրամասերի ավելացման եղանակով կամ առանց դրա, որը նախատեսված է մանրածախ առևտրի ոլորտում իրացման համար եւ նախքան օգտագործումը պահանջում է ջերմամշակում՝ մինչ խոհարարական պատրաստի վիճակը.

«մսային արտադրանք»՝ 60 տոկոսից ոչ ավելի զանգվածային բաժնով մսային բաղադրամասեր պարունակող մսամթերք, որը պատրաստվել է ոչ մսային բաղադրամասերի օգտագործմամբ կամ առանց դրա.

«մանկական սննդի համար նախատեսված մսի պահածոներ»՝ 40 տոկոսից ավելի զանգվածային բաժնով մսային բաղադրամասեր պարունակող՝ մանկական սննդի համար նախատեսված պահածոներ, որոնք պատրաստվել են ոչ մսային բաղադրամասերի օգտագործմամբ կամ առանց դրա.

«մեխանիկական եղանակով ոսկրահանված (լրացուցիչ ոսկրահանման ենթարկված) միս»՝ 0,8 տոկոսից ոչ ավելի զանգվածային բաժնով ոսկրային ներառուկներ պարունակող, մածուկանման զանգվածի տեսքով անոսկր միս, որն ստացվել է մկանային, շարակցական եւ (կամ) ճարպային հյուսվածքները (մկանային, շարակցական եւ (կամ) ճարպային հյուսվածքների մնացորդները) ոսկորից մեխանիկական եղանակով հեռացնելու միջոցով՝ առանց ոչ մսային բաղադրամասեր ավելացնելու.

«ոսկրով միս»՝ միս՝ մսեղիքի, կիսամսեղիքի, քառորդված մսեղիքի, կտորների կամ կամայական ձեւով կտրատված տարբեր չափսերի եւ զանգվածի կտորների տեսքով, որը մկանային, շարակցական եւ ոսկրային հյուսվածքների ամբողջություն է՝ ճարպային հյուսվածքների առկայությամբ կամ առանց դրա.

«միս»՝ սպանդային մթերք՝ մսեղիքի կամ մսեղիքի մասերի տեսքով, որը մկանային, ճարպային, շարակցական հյուսվածքների ամբողջություն է՝ ոսկրային հյուսվածքների առկայությամբ կամ առանց դրա.

«մսաոսկրային կիսապատրաստվածք»՝ ոսկրով մսից պատրաստված

կիսապատրաստվածք՝ կտորներով՝ անոսկր մսի եւ ոսկրի սահմանված հարաբերակցությամբ.

«մանկական սննդի համար նախատեսված մսաբուսական պահածոներ»՝ մանկական սննդի համար նախատեսված՝ միս պարունակող պահածոներ, որոնք պատրաստվել են բուսական ծագման բաղադրամասերի օգտագործմամբ եւ որոնցում պարունակվող մսային բաղադրամասերի զանգվածային բաժինը կազմում է 18-ից 40 տոկոս (ներառյալ).

«մսաբուսական մթերք»՝ միս պարունակող մթերք, որը պատրաստվել է բուսական ծագման բաղադրամասերի օգտագործմամբ եւ որոնցում պարունակվող մսային բաղադրամասերի զանգվածային բաժինը կազմում է 30-ից 60 տոկոս (ներառյալ).

«մանկական սննդի համար նախատեսված՝ միս պարունակող պահածոներ»՝ 5-40 տոկոս (ներառյալ) զանգվածային բաժնով մսային բաղադրամասեր պարունակող՝ մանկական սննդի համար նախատեսված պահածոներ, որոնք պատրաստվել են ոչ մսային բաղադրամասերի օգտագործմամբ.

«միս պարունակող կիսապատրաստվածք»՝ 5-60 տոկոս (ներառյալ) զանգվածային բաժնով մսային բաղադրամասեր պարունակող մսամթերք, որը պատրաստվել է ոսկրով կամ անոսկր մսից կամ խճողակից՝ ոչ մսային բաղադրամասերի ավելացման եղանակով, որը նախատեսված է մանրածախ առևտրի ոլորտում իրացման համար եւ նախքան օգտագործումը պահանջում է ջերմամշակում՝ մինչ խոհարարական պատրաստի վիճակը.

«միս պարունակող մթերք»՝ մսամթերք, որը պատրաստվել է ոչ մսային բաղադրամասերի օգտագործմամբ եւ որում պարունակվող մսային բաղադրամասերի զանգվածային բաժինը կազմում է 5-60 տոկոս (ներառյալ).

«ոչ մսային բաղադրիչ»՝ սննդամթերքի բաղադրագրի բաղկացուցիչ մաս, որը սպանդային մթերք կամ սպանդային մթերքի վերամշակման արդյունքում ստացված մթերք չէ.

«ոսկրահանված միս»՝ անոսկր միս՝ մկանային, շարակցական եւ ճարպային հյուսվածքների պարզ հարաբերակցությամբ.

«վնասազերծում»՝ անասնաբուժական ծառայության կողմից սահմանափակումներ ենթադրող՝ օգտագործման համար թույլատրված սպանդային մթերքի մշակման պրոցես, որը սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով իրականացվում է անասնաբուժության ոլորտի մասնագետի հսկողության ներքո.

«պաղեցված միս»՝ չափման ցանկացած կետում $-1,5^{\circ}\text{C}$ -ից $+4^{\circ}\text{C}$ ջերմաստիճանի պայմաններում սառնարանային մշակման ենթարկված թարմ միս.

«պաղեցված ենթամթերքներ»՝ սպանդից հետո չափման ցանկացած կետում $-1,5^{\circ}\text{C}$ -ից $+4^{\circ}\text{C}$ ջերմաստիճանի պայմաններում սառնարանային մշակման ենթարկված ենթամթերքներ եւ դրանց արտազատուկները.

«փշրապատած կիսապատրաստվածք»՝ կտորներով կամ աղացած կիսապատրաստվածք, որի մակերեսային ծածկված է փշրապատման բաղադրամասով կամ փշրապատման բաղադրամասերի խառնուրդով.

«թարմ միս»՝ անմիջապես սպանդից հետո ստացված միս, որի ջերմաստիճանը $+35^{\circ}\text{C}$ -ից ցածր չէ չափման ցանկացած կետում.

«կենդանիների խմբաքանակ»՝ որոշակի թվով մեկ տեսակի կենդանիներ, որոնք սահմանված ժամանակահատվածում մեկ տնտեսությունից բերվում են արտադրական օբյեկտ եւ որոնց հետ ներկայացվում են ապրանքներին կից ներկայացվող փաստաթղթեր ու անասնաբուժական հավաստագիր.

«պաստերացված պահածոներ»՝ պատրաստման ընթացքում 100°C -ից պակաս ջերմաստիճանի պայմաններում տաքացման ենթարկված եւ պաստերացված պահածոների արտադրական մանրէազերծվածության՝ սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին համապատասխանող պահածոներ, որոնց պահպանման պայմաններն ապահովում են

միկրոկենսաբանական կայունություն.

«մանկական սննդի համար նախատեսված պաստերացված մսային (միս պարունակող) փոքր երշիկներ»՝ մանկական սննդի համար նախատեսված երշիկեղեն, որոնք նախատեսված են մեկուկես տարեկանից բարձր երեխաների սննդի համար, պատրաստվել են երշիկի խճողակից, կաղապարվել 22 մմ-ից ոչ ավելի տրամագծով երշիկի թաղանթի մեջ եւ, մինչ օգտագործման համար պատրաստի լինելը, ենթարկվել են ջերմային մշակման, ինչպես նաեւ պաստերացման՝ հերմետիկ փաթեթավորմամբ.

«պաշտետ»՝ ջերմային մշակման ենթարկված բաղադրամասերից պատրաստված երշիկեղեն՝ այնպիսի թանձրության, որի շնորհիվ այն կարելի է քսել.

«պաշտետային պահածոներ»՝ մածուցիկ-կերպարանվող (վիսկոպլաստիկ) զանգված՝ այնպիսի թանձրության, որի շնորհիվ այն կարելի է քսել կամ նույնպիսի զանգված՝ ներառուկներով՝ պատրաստված մսային եւ ոչ մսային բաղադրամասերից՝ սննդային ենթամթերքների ավելացմամբ.

«մանկական սննդի համար նախատեսված կիսաապխտած երշիկեղեն»՝ կիսաապխտած երշիկեղեն, որը նախատեսված է 6 տարեկանից բարձր երեխաների սննդի համար.

«կիսաապխտած երշիկեղեն»՝ երշիկեղեն, որը պատրաստման ժամանակ ենթարկվել է տապակման կամ թեթեակի չորացման, եփման, ապխտման եւ անհրաժեշտության դեպքում՝ չորացման.

«կիսապատրաստվածք՝ խմորի մեջ»՝ լցոնած կիսապատրաստվածք, որը պատրաստվել է խմորից եւ խճողակի տեսքով միջուկից կամ կտորներով մսային բաղադրամասերից ու կամ կտորներով մսային եւ ոչ մսային բաղադրամասերից.

«մանկական սննդի համար նախատեսված կիսապատրաստվածքներ»՝ մեկուկես տարեկանից բարձր երեխաների սննդի համար նախատեսված մսային կամ միս պարունակող կիսապատրաստվածքներ.

«մթերք մսից»՝ մսեղիքի տարբեր հատվածներից պատրաստված մսամթերք՝ աղադրված եւ ջերմամշակված կամ չջերմամշակված՝ մինչ օգտագործման համար պատրաստի լինելը.

«մթերք խոզի ճարպից»՝ մսամթերք, որը պատրաստվել է խոզի ենթամաշկային ճարպից՝ կաշվով կամ առանց դրա՝ մկանային հյուսվածքների քերթվածամնացուկներով կամ առանց մկանային հյուսվածքների եւ որը պատրաստման ընթացքում ենթարկվել կամ չի ենթարկվել աղադրման, եփման, ապխտման, խորովման կամ այդ պրոցեսների զուգորդմանը.

«հում ճարպի վերամշակումից ստացված մթերք»՝ մսամթերք, որն ստացվել է ճարպ պարունակող սպանդային մթերքի վերամշակման ընթացքում.

«կոլագեն պարունակող հումքի վերամշակումից ստացված մթերք»՝ մսամթերք, որն իր մեջ ներառում է կենդանական չոր սպիտակուցներ, այդ թվում՝ հիդրոլիզատներ եւ դոնդողանյութ.

«ոսկրի վերամշակումից ստացված մթերք»՝ մսամթերք, որն ստացվել է ոսկրի կամ ոսկրի մնացորդների վերամշակման ժամանակ, որն իր մեջ ներառում է ճարպազերծված ոսկոր կամ ոսկրային հիդրոլիզատ.

«արյան վերամշակումից ստացված մթերք»՝ մսամթերք, որն ստացվել է արյան վերամշակման ժամանակ, որն իր մեջ ներառում է չոր արյուն, բաց գույնի ալբումին (արյան չոր շիճուկ կամ արյան չոր պլազմա), սեւ ալբումին, արյան ձեւավոր տարրերի հիմքով մթերքներ.

«սպանդային մթերք»՝ կենդանական ծագում ունեցող՝ չվերամշակված սննդամթերք, որն ստացվել է արդյունաբերական պայմաններում մթերատու կենդանիների սպանդի հետեւանքով եւ որն օգտագործվում է հետագա վերամշակման (մշակման) եւ (կամ) իրացման համար եւ իր մեջ ներառում է միս, ենթամթերքներ, հում ճարպ, արյուն, ոսկոր, մեխանիկական եղանակով ոսկրահանված (լրացուցիչ ոսկրահանման ենթարկված) միս, կոլագեն պարունակող կամ աղիքային հումք.

«անասնաբուժական ծառայության կողմից սահմանափակումներ ենթադրող՝ օգտագործման համար թույլատրված սպանդային մթերք»՝ սպանդային մթերք, որի օգտագործումը՝ սննդի նպատակով, թույլատրվում է վնասազերծումից հետո.

«մանկական սննդի համար նախատեսված սպանդային մթերք»՝ սպանդային մթերք՝ մանկական սննդի համար նախատեսված մսամթերքի արտադրության համար.

«մանկական սննդի համար նախատեսված խյուսանման պարունակությամբ պահածոներ»՝ մանկական սննդի համար նախատեսված պահածոներ, որոնք նախատեսված են 8 ամսականից բարձր երեխաների սննդի համար եւ պարունակում են 80 տոկոսից ոչ պակաս՝ մինչեւ 1,5 մմ չափսի մասնիկներ եւ 20 տոկոսից ոչ ավելի՝ մինչեւ 3 մմ չափսի մասնիկներ.

«հալեցված միս»՝ սառեցված միս, որը տաքացվել է չափման ցանկացած կետում՝ $-1,5^{\circ}\text{C}$ -ից ոչ ցածր ջերմաստիճանի պայմաններում.

«հալեցված ենթամթերքներ»՝ սառեցված ենթամթերքներ, որոնք տաքացվել են չափման ցանկացած կետում՝ $-1,5^{\circ}\text{C}$ -ից ոչ ցածր ջերմաստիճանի պայմաններում.

«բուսամսային մթերք»՝ միս պարունակող մթերք, որը պատրաստվել է բուսական ծագման բաղադրամասերի օգտագործմամբ եւ որոնցում պարունակվող մսային բաղադրամասերի զանգվածային բաժինը կազմում է 5-30 տոկոս (ներառյալ).

«մանկական սննդի համար նախատեսված բուսամսային պահածոներ»՝ մանկական սննդի համար նախատեսված՝ միս պարունակող պահածոներ, որոնք պատրաստվել են բուսական ծագման բաղադրամասերի օգտագործմամբ եւ որոնցում պարունակվող մսային բաղադրամասերի զանգվածային բաժինը կազմում է 5-18 տոկոս (ներառյալ).

«մսամթերքի բաղադրագիր»՝ մսամթերքի արտադրության ընթացքում

օգտագործված բաղադրամասերի՝ արտադրողի կողմից փաստաթղթերով սահմանված ամբողջական ցանկ, որի մեջ նշված է մսային եւ ոչ մսային բաղադրամասերի՝ ներառյալ ջրի մեջ ավելացվող (այդ թվում՝ սառույցի, արգանակների, աղալուծությունների տեսքով) կերակրի աղի, համեմունքների, սննդային հավելումների քանակությունը, որոնց համաձայն որոշվում է մսամթերքի պատկանելիությունը մսային, միս պարունակող, մսաբուսական կամ բուսամսային խմբերին.

«աղացած պարունակությամբ պահածոներ»՝ 16-25 մմ չափսի մսի կտորներ պարունակող պահածոներ, որոնց պարունակությունը դոնդողի եւ ճարպի մեջ հավասարաչափ խառնած մսային եւ ոչ մսային բաղադրամասերից կազմված միաձուլված զանգված է.

«աղացած մսային կիսապատրաստվածք»՝ մսային կիսապատրաստվածք, որը պատրաստվել է մանրացված մսային կամ մանրացված մսային եւ ոչ մսային բաղադրամասերից՝ կերակրի աղի, համեմունքների եւ սննդային հավելումների ավելացմամբ կամ առանց դրա.

«աղացած միս պարունակող կիսապատրաստվածք»՝ միս պարունակող կիսապատրաստվածք, որը պատրաստվել է մանրացված մսային եւ ոչ մսային բաղադրամասերից՝ կերակրի աղի, համեմունքների եւ սննդային հավելումների ավելացմամբ կամ առանց դրա.

«մանրեազերծված պահածոներ»՝ պատրաստման ընթացքում 100°C-ից ավելի ջերմաստիճանի պայմաններում տաքացման ենթարկված եւ մանրեազերծված պահածոների արտադրական մանրեազերծվածության՝ սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին համապատասխանող պահածոներ.

«դոնդող»՝ ջերմային մշակման ենթարկված բաղադրամասերից կազմված երշիկեղեն՝ փափուկից կոշտ թանձրության, որը պատրաստվել է 100 տոկոսից ավելի արգանակի ավելացմամբ.

«ենթամթերքներ»՝ ներքին օրգանների, գլխի, պոչի, վերջույթների (կամ դրանց մասերի), առանց կապտուկների մսային կտորտանքներով սպանդային մթերք՝ առանց շճաթաղանթի եւ հարակից հյուսվածքների, ինչպես նաեւ խոզի կաշվի եւ միջոսկրային հատվածների.

«կենդանական չոր ճարպեր»՝ կոլագեն պարունակող հումքի վերամշակումից, ինչպես նաեւ դրա հիդրոլիզի եւ չորացման արդյունքում ստացված մթերք.

«չոր մթերք»՝ ֆիզիկական եղանակով ջրազրկելու միջոցով պատրաստված մսամթերք, որում խոնավության մնացորդային զանգվածային բաժինը 10 տոկոսից (ներառյալ) ոչ ավելի է.

«հում թորշոմած երշիկեղեն»՝ երշիկեղեն, որը պատրաստման ընթացքում ենթարկվել է նստվածքի առաջացմանը եւ (կամ) ֆերմենտացիայի՝ մեկնարկային կուլտուրաների օգտագործմամբ կամ առանց դրա, ինչպես նաեւ չորացման.

«հում թորշոմած մսամթերք»՝ մսամթերք, որը պատրաստման ընթացքում ենթարկվել է ֆերմենտացիայի՝ մեկնարկային կուլտուրաների օգտագործմամբ կամ առանց դրա, ինչպես նաեւ չորացման.

«հում ապխտած երշիկեղեն»՝ երշիկեղեն, որը պատրաստման ընթացքում ենթարկվել է նստվածքի առաջացմանը եւ (կամ) ֆերմենտացիայի՝ մեկնարկային կուլտուրաների օգտագործմամբ կամ առանց դրա, ինչպես նաեւ սառը ապխտման եւ չորացման.

«հում ապխտած մսամթերք»՝ մսամթերք, որը պատրաստման ընթացքում ենթարկվել է ֆերմենտացիայի՝ մեկնարկային կուլտուրաների օգտագործմամբ կամ առանց դրա, ինչպես նաեւ սառը ապխտման եւ չորացման.

«աղիքային հումք»՝ աղիքի եւ մարսողական տրակտի այլ հատվածների, միզապարկի տեսքով սպանդային մթերք.

«կոլագեն պարունակող հումք»՝ սպանդային մթերք, որի բաղադրության մեջ

մտնում է կոլագեն սպիտակուց.

«հալեցված կենդանական ճարպ»՝ հում ճարպից եւ այլ՝ ճարպ պարունակող սպանդային մթերքից մսամթերք.

«խճողակ»՝ 8 մմ-ից ոչ ավելի չափսի մասնիկներից կազմված աղացած կիսապատրաստվածք, որը նախատեսված է կաղապարված կիսապատրաստվածքների պատրաստման կամ մանրածախ առետրում իրացնելու համար.

«խճողակային պահածոներ»՝ մսային եւ ոչ մսային բաղադրամասերից պատրաստված պահածոներ՝ համասեռ կամ ոչ համասեռ կառուցվածքի միաձուլված խճողակի տեսքով, որը տարայից հանելու դեպքում պահպանում է իր ձեւը, կամ կաղապարված մթերքների տեսքով՝ արգանակի, սոուսի, ճարպի կամ դոնդողակի մեջ.

«լցոնած կիսապատրաստվածք»՝ կաղապարված կիսապատրաստվածք, որի պատրաստման ընթացքում կատարվում է մի տեսակ բաղադրամասերի կամ բաղադրամասերի խառնուրդների լցոնում կամ փաթաթում մեկ այլ բաղադրամասերի կամ բաղադրամասերի խառնուրդների մեջ.

«կաղապարված կիսապատրաստվածք»՝ կտորներից բաղկացած կամ աղացած կիսապատրաստվածք, որն ունի որոշակի երկրաչափական ձեւ.

«դոնդող (խոլոդեց)»՝ ջերմային մշակման ենթարկված բաղադրամասերից կազմված երշիկեղեն՝ փափուկից կոշտ թանձրության, որը պատրաստվել է 100 տոկոսից ոչ ավելի արգանակի ավելացմամբ.

III. Սպանդային մթերքի եւ մսամթերքի

նույնականացման կանոնները

6. Սպանդային մթերքը եւ մսամթերքը տեխնիկական կանոնակարգման այն առարկաների թվին դասելու նպատակով, որոնց նկատմամբ կիրառվում է սույն Տեխնիկական կանոնակարգը, սպանդային մթերքի եւ մսամթերքի

նույնականացումն իրականացվում է հայտատուի, պետական հսկողության (վերահսկողության), մաքսային հսկողություն ու համապատասխանության գնահատում (հավաստում) իրականացնող մարմինների, ինչպես նաև այլ շահագրգիռ անձանց կողմից՝ առանց հետազոտությունների (փորձարկումների) անցկացման՝ մականշվաձքում կամ ապրանքներին կից ներկայացվող փաստաթղթերում նշված՝ սպանդային մթերքի եւ մսամթերքի անվանումները սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ կետով սպանդային մթերքի եւ մսամթերքի համար նախատեսված անվանումների հետ համեմատելու եղանակով:

7. Իր անվանման հետ սպանդային մթերքի եւ մսամթերքի համապատասխանությունը որոշելու նպատակով սպանդային մթերքի եւ մսամթերքի նույնականացումն իրականացվում է արտաքին տեսքը եւ զգայորոշման ցուցանիշները այն ստանդարտներով սահմանված հատկանիշների հետ համեմատելու եղանակով, որոնց կամավոր հիմունքով կիրառումն ապահովում է սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարում, որոնք սահմանված են ստանդարտների ցանկով եւ կիրառվում են սույն Տեխնիկական կանոնակարգով կամ որոշակի տեխնիկական փաստաթղթերով սահմանված այն հատկանիշների հետ համապատասխանությունը գնահատելու (հավաստելու) նպատակով, որոնց համաձայն է իրականացվում սպանդային մթերքի եւ մսամթերքի պատրաստումը:

8. Այն դեպքում, երբ սպանդային մթերքը եւ մսամթերքը հնարավոր չէ նույնականացնել տեսողական եւ զգայորոշման մեթոդներով եւ մականշվաձքում կամ ապրանքներին կից ներկայացվող փաստաթղթերում նշված տեղեկությունների վրա հիմնվելով, ապա նույնականացումն իրականացվում է վերլուծական մեթոդով՝ սույն Տեխնիկական կանոնակարգում այդ մթերքի սահմանմամբ որոշված ցուցանիշներին, ինչպես նաև ստանդարտներում նշված այն հատկանիշներին սպանդային մթերքի եւ մսամթերքի ֆիզիկաքիմիական ցուցանիշների համապատասխան լինելը ստուգելու եղանակով, որոնց կամավոր

հիմունքով կիրառումն ապահովում է սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարում, որոնք սահմանված են ստանդարտների ցանկով եւ կիրառվում են սույն Տեխնիկական կանոնակարգով կամ որոշակի տեխնիկական փաստաթղթերով սահմանված այն հատկանիշների հետ համապատասխանությունը գնահատելու (հավաստելու) նպատակով, որոնց համաձայն է իրականացվում սպանդային մթերքի եւ մսամթերքի պատրաստումը:

IV. Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների շուկայում սպանդային մթերքի ու մսամթերքի շրջանառության կանոնները

9. Սպանդային մթերքը եւ մսամթերքը Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) շուկայում շրջանառության մեջ են դրվում այն դեպքում, երբ դրանք համապատասխանում են սույն Տեխնիկական կանոնակարգի, ինչպես նաեւ Մաքսային միության այն տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրանց վրա:

10. Մաքսային միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվելու դեպքում սպանդային մթերքին եւ մսամթերքին կից ներկայացվում են անդամ պետության լիազորված մարմինների կողմից տրվող անասնաբուժական հավաստագիր եւ ապրանքներին կից ներկայացվող փաստաթղթեր:

Անդամ պետությունների միջեւ տեղափոխվող այն մսամթերքին կից, որը ենթակա է անասնաբուժական հսկողության (վերահսկողության) եւ ներմուծվել է երրորդ երկրներից կամ արտադրվել է Մաքսային միության մաքսային տարածքում, ներկայացվում է անդամ պետության լիազորված մարմինների կողմից առանց անասնաբուժասանիտարական փորձաքննություն անցկացնելու տրվող անասնաբուժական հավաստագիր, որը հաստատում է կենդանահամաճարակային առումով անվտանգ լինելը:

Սպանդային մթերքի եւ մսամթերքի յուրաքանչյուր խմբաքանակ, որը ենթակա է անասնաբուժական հսկողության (վերահսկողության), Մաքսային միության մաքսային տարածք է ներմուծվում ուղարկող երկրի իրավասու մարմնի կողմից տրված անասնաբուժական հավաստագրի առկայության դեպքում:

11. Սպանդային մթերքը եւ մսամթերքը, որոնք համապատասխանում են սույն Տեխնիկական կանոնակարգի, ինչպես նաեւ Մաքսային միության տեխնիկական այն կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրանց վրա եւ որոնք անցել են համապատասխանության գնահատման (հավաստման) ընթացակարգեր, մակնշվում են Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով:

12. Սպանդային մթերքը եւ մսամթերքը, որոնք չեն համապատասխանում սույն Տեխնիկական կանոնակարգի, ինչպես նաեւ Մաքսային միության տեխնիկական այն կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրանց վրա, ինչպես նաեւ պիտանելիության ժամկետը լրացած սպանդային մթերքի եւ մսամթերքի շրջանառությունն անդամ պետությունների շուկայում չի թույլատրվում:

V. Սպանդային մթերքին եւ մսամթերքին ներկայացվող անվտանգության պահանջները

13. Մաքսային միության մաքսային տարածքում շրջանառության մեջ գտնվող սպանդային մթերքը եւ մսամթերքը պիտանելիության սահմանված ժամկետի ընթացքում ըստ նշանակության օգտագործվելիս պետք է անվտանգ լինեն:

14. Սպանդային մթերքը եւ մսամթերքը պետք է համապատասխանեն սույն Տեխնիկական կանոնակարգի եւ այն տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրանց վրա:

15. Սպանդային մթերքի եւ մսամթերքի (այդ թվում՝ մանկական սննդի համար նախատեսված սպանդային մթերքի եւ մսամթերքի) անվտանգության միկրոկենսաբանական եւ հիգիենիկ նորմատիվները պետք է համապատասխանեն 1-3-րդ հավելվածներով նախատեսված պահանջներին:

16. Պատրաստման ընթացքում ապխտման ենթարկվող մսամթերքը չպետք է պարունակի 0,001 մգ/կգ-ից ավելի բենզ(ա)պիրեն:

Մանկական սննդի համար նախատեսված մթերքներում բենզ(ա)պիրենի առկայությունը չի թույլատրվում:

17. Մանկական սննդի համար նախատեսված մսամթերքի ֆիզիկաքիմիական ցուցանիշները պետք է համապատասխանեն 4-րդ հավելվածով նախատեսված պահանջներին:

18. Սպանդային մթերքի եւ մսամթերքի մեջ անասնաբուժական (զոոտեխնիկական) դեղամիջոցների, կենդանիների աճի խթանիչների (այդ թվում՝ հորմոնալ պատրաստուկների), դեղամիջոցների (այդ թվում՝ հակաբիոտիկների) մնացորդային առավելագույն թույլատրելի մակարդակները հսկվում են՝ Մաքսային միության մաքսային տարածք դրանք ներմուծելիս կամ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերամշակման համար մատակարարելիս արտադրողի (մատակարարի) կողմից դրանց կիրառության վերաբերյալ ներկայացված տեղեկատվության հիման վրա եւ պետք է համապատասխանեն 5-րդ հավելվածով նախատեսված պահանջներին:

19. Մսամթերքի արտադրության ժամանակ օգտագործվող ոչ մսային բաղադրամասերը պետք է համապատասխանեն Մաքսային միության տեխնիկական այն կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրանց վրա:

VI. Սպանդային մթերքի եւ մսամթերքի արտադրական
պրոցեսներին ներկայացվող պահանջները

20. Սպանդային մթերքի եւ մսամթերքի արտադրողները, վաճառողները եւ օտարերկրյա արտադրողների գործառույթներն իրականացնող անձինք պարտավոր են դրանց արտադրության պրոցեսներն այնպես իրականացնել, որ տվյալ արտադրանքը համապատասխանի սույն Տեխնիկական կանոնակարգի եւ Մաքսային միության տեխնիկական այն կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրանց վրա:

21. Արտադրական այն օբյեկտները, որոնցում իրականացվում է մթերատու կենդանիների սպանդը, սպանդային մթերքի վերամշակումը (մշակումը) եւ մսամթերքի արտադրությունը, «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 021/2011) համաձայն, ենթակա են պետական գրանցման:

22. Այն արտադրական տարածքների կազմակերպումը, որտեղ իրականացվում է սպանդային մթերքի եւ (կամ) մսամթերքի արտադրության պրոցեսը, սպանդային մթերքի եւ մսամթերքի արտադրության մեջ օգտագործվող տեխնոլոգիական սարքավորումները եւ գույքը, դրանց արտադրության մնացորդների պահպանման եւ հեռացման պայմանները, ինչպես նաեւ դրանց արտադրության ընթացքում օգտագործվող ջուրը պետք է համապատասխանեն «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 021/2011) պահանջներին:

23. Սպանդային մթերքի եւ մսամթերքի արտադրության պրոցեսի բոլոր փուլերում պետք է ապահովվի դրանց հետեւելիությունը (հետագծելիությունը):

24. Արտադրության ընթացքում սպանդային մթերքի եւ մսամթերքի հետ շփման մեջ գտնվող նյութերը պետք է համապատասխանեն սննդամթերքի հետ շփման մեջ գտնվող նյութերի անվտանգությանը ներկայացվող պահանջներին:

25. Պատրաստի արտադրանքի փաթեթվածքի համար օգտագործվող

փաթեթավորման նյութերը մատուցվում են արտադրական տարածքները շրջանցող միջանցքներով կամ փաթեթավորման սենյակներով: Արտադրական տարածքներում փաթեթավորման նյութերի պահպանումն արգելվում է:

VII. Սպանդային մթերքին եւ դրա արտադրության պրոցեսներին ներկայացվող պահանջները

26. Սպանդային մթերքի արտադրության պրոցեսը ներառում է մթերատու կենդանիների նախապատրաստում՝ սպանդի համար, մթերատու կենդանիների սպանդ, մսեղիքի մասնատում, ոսկրահանում եւ ջլազերծում, մսեղիքի, կիսամսեղիքի եւ ենթամթերքների մաքրամշակում, անասնաբուժական արգելամսեղիքի հավաքում:

27. Սպանդի համար մթերատու կենդանիների նախապատրաստման պրոցեսը պետք է համապատասխանի սույն Տեխնիկական կանոնակարգի եւ «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի՝ (ՄՄ ՏԿ 021/2011) կենդանական ծագում ունեցող՝ չվերամշակված սննդամթերքի ստացման պրոցեսներին վերաբերող պահանջներին:

28. Արտադրական օբյեկտ բերված մթերատու կենդանիները ենթարկվում են նախասպանդային անասնաբուժասանիտարական զննման եւ նախասպանդային պահման՝ անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան:

29. Այն դեպքում, երբ մթերատու կենդանիների խմբաքանակի մեջ հայտնաբերվում են հոգեվարքի վիճակում գտնվող հիվանդ մթերատու կենդանիներ, հարկադիր սպանդի ենթարկված մթերատու կենդանիներ կամ մթերատու կենդանիների դիակներ, կամ երբ խմբաքանակում առկա մթերատու կենդանիների գլխաքանակը չի համապատասխանում անասնաբուժական փաստաթղթում նշված գլխաքանակին, ապա մթերատու կենդանիների այդօրինակ խմբաքանակն անմիջապես տեղավորում են կարանտինային

շինությունում՝ մինչ ավտորոշման կամ անհամապատասխանության պատճառների հաստատումը:

30. Չի թույլատրվում՝

ա) սպանդի ենթարկել չնույնականացված մթերատու կենդանիների, նախասպանդային պահում եւ նախասպանդային անասնաբուժական զննում չանցած մթերատու կենդանիների, ինչպես նաեւ մաշկածածկույթի վրա գոմաղբի առկայությամբ մթերատու կենդանիների.

բ) տերերին վերադարձնել հիվանդ եւ (կամ) հիվանդության կասկած հարուցող մթերատու կենդանիներին, տրավմատիկ վնասվածքներով մթերատու կենդանիներին, ինչպես նաեւ ընդունման ժամանակ հայտնաբերված՝ մթերատու կենդանիների դիակները.

գ) արտահանել (դուրս հանել) սպանդի համար ընդունված կենդանիներին նախասպանդային պահման եւ սպանդի համար նախատեսված տարածքից.

դ) մթերատու կենդանիների դիակները եւ անասնաբուժական արգելամսեղիքն ուղարկել պինդ կենցաղային թափոնների պոլիգոններ:

31. Մթերատու կենդանիների ընդունման եւ նախասպանդային անասնաբուժական զննման ժամանակ ինֆեկցիոն հիվանդությունների ախտանիշներով մթերատու կենդանիների հայտնաբերման դեպքում մթերատու կենդանիների ամբողջ խմբաքանակը մեկուսացվում է՝ մինչ վերջնական ավտորոշումը:

32. Մթերատու կենդանիները սպանդի նպատակով նախասպանդային պահման շինություններից (բաց փարախներից) ուղարկվում են սպանդի համար նախատեսված շինություններ այնպես, որ ապահովվի հոսքագծի ռիթմիկ աշխատանքը եւ կանխարգելվի խաչաձեւ վարակումը:

33. Մթերատու կենդանիների սպանդի պրոցեսը պետք է համապատասխանի սույն Տեխնիկական կանոնակարգի եւ «Սննդամթերքի

անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի՝ (ՄՄ ՏԿ 021/2011) կենդանական ծագում ունեցող՝ չվերամշակված սննդամթերքի ստացման պրոցեսներին վերաբերող պահանջներին:

34. Սպանդի պրոցեսի ժամանակ պետք է ապահովվի սպանդային մթերքի նույնականացումը եւ դրա հետեւելիությունը (հետագծելիությունը) տեխնոլոգիական ամբողջ պրոցեսի ժամանակ:

35. Սպանդի պրոցեսի ժամանակ պետք է ապահովվի սպանդի տեխնոլոգիական պրոցեսների ռեժիմները եւ տեխնոլոգիական հնարների կիրառումը, որոնք բացառում են մսեղիքի մակերեսային աղտոտումը:

36. Պետք է ապահովվի սպանդի հետ կապված աշխատանքային պրոցեսների՝ հետեւյալ խմբերի բաժանումը՝

ա) 1-ին խումբ՝ անշարժացում, արյունազերծում, կաշվի նախանջատում եւ մաշկահանում (կաշվե ծածկույթով խոզի մսի դեպքում՝ շոգեխաշում, մազերի հեռացում, խանձում եւ մսեղիքից մազերի մնացորդների հեռացում):

Մթերատու կենդանիների անշարժացումն իրականացվում է մթերատու կենդանիների զգայունակության թուլացումն ու սիրտը բաբախելու պայմաններում շարժման ունակության կորցնելն ապահովող միջոցներով:

Մթերատու կենդանիների արյունազերծումն իրականացվում է դրանց հնարավորինս լրիվ արյունազերծումն ապահովող եղանակով:

բ) 2-րդ խումբ՝ փորոտիքի հեռացում, մսեղիքի բաժանում կիսամսեղիքի, մսեղիքի մաքրամշակում, դրոշմում եւ կշռում:

գ) 3-րդ խումբ՝ կողմնակի հումքի մշակում եւ վերամշակում (ենթամթերքների, աղիքային հումքի, հում ճարպի, արյան, ոսկրի, էնդոկրինոֆերմենտային եւ հատուկ հումքի, կաշվե հումքի ու ոչ սննդային հումքի):

37. Սպանդի ժամանակ կիրառվող լարափակոցների, սարքավորումների ու

գործիքների առումով պետք է բացառվեն մսեղիքի, կիսամսեղիքի եւ սպանդային մթերքի վրա աղտոտումը փոխանցելու հնարավորությունը:

38. Անհրաժեշտ է նախատեսել սպանդի հոսքագծի անջատման արտակարգ դեպքեր, երբ անասնաբուժական ոլորտի աշխատողներն, իրենց աշխատանքային տեղերից հնարավորություն կունենան տեխնիկական ապարատների (օրինակ՝ «կանգ» սեղմակի) օգնությամբ, անջատել այն՝ մթերատու կենդանիներին հատուկ վտանգավոր հիվանդությունների կասկածի կամ հայտնաբերման դեպքում:

39. Անասնաբուժական արգելամսեղիքի հավաքման նպատակով անհրաժեշտ է սարքավորել տարբեր գույներով ներկված եւ տեսականշված առանձին թեքափորվածքներ կամ հատուկ լցարաններ, որոնց դեպքում կբացառվի չթույլատրված մուտքը:

40. Մսնդային նպատակով օգտագործվող արյունը հավաքվում է մթերատու կենդանու անշարժացումից ոչ ուշ, քան 3 րոպե անց՝ մանրէազերծված թեքավուն դանակի օգնությամբ, որը խողովակի օգնությամբ մտնում է մանրէազերծված եւ տեսականշված լցարան: Մեկ լցարանի մեջ թույլատրվում է հավաքել ոչ ավելի, քան 10 մթերատու կենդանիներից վերցված արյուն:

Արյունն ուղարկվում է վերամշակման (մշակման) մթերատու կենդանու սպանդից ոչ ուշ, քան 2 ժամ անց:

41. Մսեղիքից փորոտիքի հեռացումն իրականացվում է խոշոր եղջերավոր կենդանիների եւ խոզերի դեպքում՝ ոչ ուշ, քան 45 րոպե անց եւ մանր եղջերավոր կենդանիների դեպքում՝ ոչ ուշ, քան 30 րոպե անց՝ մթերատու կենդանու արյունազերծման պրոցեսի ավարտից հետո:

Դրա հետ մեկտեղ չի թույլատրվում մսեղիքի մակերեսային աղտոտում՝ ստամոքսի եւ աղիքի պարունակությամբ:

Մսեղիքից փորոտիքի հեռացման ժամանակ դանակը փոխարինվում է սանիտարական մշակման ենթարկված մեկ այլ դանակով՝ 30 րոպեի ընթացքում

1 անգամից ոչ պակաս:

42. Ձեռքերը, օղագրահի ձեռնոցները եւ գոգնոցները լվացվում են ըստ կեղտոտվածության աստիճանի, սակայն 30 րոպեի ընթացքում 1 անգամից ոչ պակաս:

43. Փորոտիքի հեռացման ժամանակ հանված սպանդային մթերքն ուղարկվում է վերամշակման (մշակման)՝ մսեղիքից դրանք հեռացնելուց հետո ոչ ուշ, քան 15 րոպե անց:

44. Մսեղիքի սղոցման եւ դրանից ողնուղեղի հեռացման ժամանակ չեն խաթարում դրա ամբողջականությունը:

45. Մսեղիքի սղոցման ժամանակ օգտագործվող սղոցի շեղքը սանիտարական մշակման է ենթարկում ոչ ուշ, քան 1 ժամ աշխատանքից հետո:

46. Բոլոր տեսակների մթերատու կենդանիների մսեղիքի (կիսամսեղիքի) մաքրամշակման ընթացքում հեռացվում են կապտուկները, արյունազեղումները եւ աղտոտված հատվածները:

47. Ենթամթերքների մաքրամշակումը կապտուկներից եւ շճաթաղանթի ու դրա հարակից հյուսվածքների հեռացման պրոցեսը պետք է ավարտվի ոչ ուշ, քան մթերատու կենդանու սպանդից 3 ժամ հետո՝ ներառելով պաղեցման կամ սառեցման համար դրանց փոխանցումը:

48. Մթերատու կենդանիների սպանդի համար նախատեսված շինություններում չի թույլատրվում իրականացնել մազաձածկույթով ենթամթերքների մաքրամշակման պրոցեսներ՝ բացառությամբ այդ պրոցեսների իրականացումը բոլոր տեսակների ենթամթերքների համար՝ առանձին շինության մեջ:

49. Մսեղիքի (կիսամսեղիքի, քառորդված մսեղիքի, մսի կտորների) մասնատումը, դրանց ոսկրահանումը եւ ջլազերծումն իրականացվում է +12°C-ից ոչ բարձր օդի ջերմաստիճանի դեպքում:

50. Ոսկրահանման եւ ջլազերծման պրոցեսների իրականացման համար անհրաժեշտ գործիքներն ախտահանման նպատակով պետք է փոխվեն ըստ կեղտոտվածության աստիճանի՝ սակայն 30 րոպեի ընթացքում 1 անգամից ոչ պակաս:

51. Հալած կենդանական ճարպի արտադրության համար անհրաժեշտ ոսկորը եւ դրա վերամշակումից ստացված մթերքը վերամշակման (մշակման) է ուղարկվում ոսկրահանումից հետո ոչ ուշ, քան 6 ժամ անց: Վերամշակումը ձգձգելու դեպքում ոսկորը տեղավորում են պաղեցվող շինության մեջ եւ դրա պահման ժամկետը $+8^{\circ}\text{C}$ -ից ոչ ավելի պահման ջերմաստիճանի դեպքում կազմում է 24 ժամից ոչ ավելի:

52. Կոլագեն պարունակող հումքը՝ առանց ոսկորների, թույլատրվում է պահածոյացնել կերակրի աղի օգտագործմամբ եւ այդ նպատակով թույլատրված այլ միջոցներով ու պահպանել փակ տարաներում:

53. Սպանդից հետո մսեղիքը եւ սպանդային այլ մթերքներ ենթակա են անասնաբուժասանիտարական փորձաքննության ու դրոշմման՝ անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան:

54. Սպանդից հետո մթերատու կենդանիների մոտ հիվանդությունների հայտնաբերման դեպքում մսեղիքի վրա դրվում է անասնաբուժական կնիք, որը վկայում է դրա վնասազերծման կամ ուտիլիզացման եղանակների մասին:

55. Մսի եւ ենթամթերքների ոսկրահանման ու ջլազերծման պրոցեսի ընթացքում ինֆեկցիոն եւ ինվազիվ հիվանդություններին բնորոշ պաթոլոգիական փոփոխություններ հայտնաբերելիս, սպանդային մթերքը, մինչ լաբորատոր հետազոտությունների պատասխանների ստացումը, տեղադրում են մեկուսացված խցիկում: Դրա հետ իրականացնում են գործիքների, սարքավորումների եւ արտադրական (հատուկ) համազգեստի համապատասխան սանիտարական մշակում (ախտահանում):

56. Անասնաբուժական ծառայության կողմից սահմանափակումներ ենթադրող՝ օգտագործման համար թույլատրված սպանդային մթերքի վնասազերծումն իրականացվում է այդ նպատակով հարմարեցված շինություններում, որտեղ սարքավորումները կիրառվում են այնպես, որ բացառվեն սպանդային մթերքի եւ վնասազերծված սպանդային մթերքի տեղափոխման խաչաձեւ հոսքերը:

Դրանց հետագա վերամշակումն արտադրական տարածքներում իրականացվում է հերթափոխի ավարտին կամ մյուս հերթափոխի ժամանակ՝ անասնաբուժական ծառայության մասնագետի հսկողության ներքո: Աշխատանքների ավարտից հետո իրականացվում է շինության, սարքավորումների եւ գույքի սանիտարական մշակում (ախտահանում):

57. Մանկական սննդի համար նախատեսված սպանդային մթերքի արտադրության պրոցեսն իրականացվում է հերթափոխի սկզբին կամ առանձին հերթափոխի ժամանակ՝ տեխնոլոգիական սարքավորումների եւ գույքի նախապես լվացման ու ախտահանման պայմանով:

58. Վայրի (որսի ենթակա) մթերատու կենդանիների սպանդն իրականացվում է անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

VIII. Մսամթերքին եւ դրա արտադրության պրոցեսներին ներկայացվող պահանջները

59. Մսամթերքի արտադրության մեջ օգտագործվող սպանդային մթերքը պետք է համապատասխանի սույն Տեխնիկական կանոնակարգի եւ Մաքսային միության «Սննդամթերքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգի պահանջներին (ՄՄ ՏԿ 021/2011):

60. Արտադրական օբյեկտում գտնվող չնույնականացված սպանդային

մթերքը ենթակա է ուտիլիզացման:

61. Ենթամթերքի նախապատրաստումը՝ ներառյալ հալեցումը, զննումը, լվացումը, մաքրամշակումը եւ ջլազերծումն իրականացվում են առանձին շինությունում կամ արտադրական տարածքների՝ հատուկ այդ նպատակով առանձնացված տարածքներում:

62. Ենթամթերքներից եւ արյունից պատրաստվող մսամթերքի արտադրությունն իրականացվում է առանձին շինությունում:

Այս արտադրանքի արտադրությունը թույլատրվում է երշիկեղենի արտադրության համար նախատեսված շինությունում՝ դրա համար նախատեսված սարքավորումներով՝ պայմանով, որ այն կիրականացվի տեխնոլոգիական սարքավորումների եւ գույքի լվացման հետ հաջորդաբար:

63. Աղիքի թաղանթի պատրաստումն իրականացվում է առանձին շինությունում կամ երշիկեղենի արտադրության համար նախատեսված շինության՝ միջնապատով բաժանված առանձին տարածքներում՝ $+12^{\circ}\text{C}$ -ից ոչ բարձր օդի ջերմաստիճանում:

64. Անասնաբուժական եւ ապրանքագիտական դրոշմներն ու կնիքները ջնջվում են՝ բացառությամբ սպանդային մթերքի մականշվածքի համար թույլատրված սննդային ներկանյութերով դրված դրոշմների եւ կնիքների, որոնք հետո չեն ջնջում:

65. Տեխնոլոգիական պրոցեսի ժամանակ չօգտագործված դանակները պահվում են մանրէազերծիչի (ստերիլիզատորի) մեջ կամ դրա համար հատուկ հատկացված վայրում:

66. Մանրացման եւ (կամ) աղադրման համար ուղարկվող սպանդային մթերքը չափման ցանկացած կետում պետք է ունենա $+4^{\circ}\text{C}$ -ից ոչ բարձր ջերմաստիճան՝ բացառությամբ թարմ մսի:

67. Մսի եւ ենթամթերքի մանրացումը, խճողակի պատրաստումը եւ

թաղանթի (կաղապարի) լցնումն իրականացվում է $+12^{\circ}\text{C}$ -ից ոչ բարձր օդի ջերմաստիճանում:

68. Դոնդողանյութի արտադրության մեջ արգելվում է օգտագործել կոլագեն պարունակող հումք, որը ենթարկվել է դաբաղման պրոցեսի (կաշին կարծրացվել է դաբաղման բուսական նյութերի, քրոմային աղերի կամ այնպիսի նյութերի միջոցով, ինչպիսիք այլումինի աղերը, երկաթի աղերը (III), սիլիկաթթվի աղերը, ալդեհիդները եւ խինոնը կամ այլ սինթետիկ պնդարարներ են):

69. Հալած կենդանական ճարպ ստանալու համար օգտագործում են հում ճարպ, որը փորոտիքից հանելուց հետո մշակման են ենթարկում ամենաուշը 2 ժամից:

70. Նատրիումի նիտրիտը (կալիումի նիտրիտը) օգտագործվում է միայն որպես նիտրիտային աղադրման (աղադրման նիտրիտային) խառնուրդ՝ 0,9 տոկոսից ոչ ավելի նատրիումի նիտրիտի (կալիումի նիտրիտի) զանգվածային բաժնով:

Մեկ անվանում ունեցող մսամթերքի արտադրության մեջ միաժամանակ չի թույլատրվում օգտագործել 2 եւ ավելի նիտրիտային աղադրման (աղադրման նիտրիտային) խառնուրդներ:

Չի թույլատրվում օգտագործել նիտրիտային աղադրման (աղային նիտրիտային) խառնուրդներն այն սպանդային մթերքի եւ մսամթերքի համար, որոնք իրացման նպատակով շրջանառության մեջ են դրվում չվերամշակված վիճակում:

71. Ոչ մսային բաղադրամասերի նախապատրաստումը՝ ներառյալ կշռումը եւ չափաճրարումը, իրականացվում են առանձին շինություններում:

72. Չի թույլատրվում մսամթերքի արտադրության ժամանակ ջեռուցման բաժին վառելիք (տաշեղ, փայտ) մատակարարել արտադրական տարածքներով:

73. Մսային եւ միս պարունակող երշիկեղենի ու մսային արտադրանքի

արտադրության մեջ հարկավոր է պահպանել հետեւյալ պահանջները՝

ա) աղադրված միսը պահվում է $+4^{\circ}\text{C}$ -ից ոչ ավելի օդի ջերմաստիճան ունեցող շինություններում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ աղադրման պրոցեսում կիրառվում են պաղեցման ներկառուցված համակարգ ունեցող տեխնոլոգիական սարքավորումներ.

բ) աղալուծույթի պատրաստումը եւ ոչ մսային բաղադրամասերի կշռաճրարումն (նախապատրաստումը) իրականացվում է այն ծավալով, որն անհրաժեշտ է արտադրական օբյեկտի 1 հերթափոխի կողմից օգտագործվելու համար.

գ) երշիկեղենի եւ մսային արտադրանքի ջերմամշակումն իրականացվում է ջերմաստիճանը (այդ թվում՝ արտադրանքի միջուկը՝ բացառությամբ կիսաապխտած եւ հում թորշումած արտադրատեսակների) եւ հարաբերական խոնավությունը կամ միայն ջերմաստիճանը (ջրում ջերմամշակում իրականացնելու համար) վերահսկող սարքեր ունեցող հատուկ սարքավորմամբ:

74. Մսային եւ միս պարունակող կիսապատրաստվածքների արտադրության մեջ հարկավոր է պահպանել հետեւյալ պահանջները՝

ա) իրացման համար նախատեսված, այդ թվում՝ հանրային սննդի ձեռնարկություններում իրացման համար նախատեսված մսային եւ միս պարունակող կիսապատրաստվածքները չի թույլատրվում արտադրել նատրիումի նիտրիտի (կալիումի նիտրիտի) կիրառմամբ.

բ) կիսապատրաստվածքների սառեցման համար նախատեսված արագ սառեցնող սարքավորումները թույլատրվում է տեղադրել այն տարածքում, որտեղ իրականացվում է դրանց կշռաճրարումը եւ փաթեթավորումը.

գ) չի թույլատրվում իրացնել չափման ցանկացած կետում $+6^{\circ}\text{C}$ -ից բարձր ջերմաստիճանով կիսապատրաստվածքները:

75. Պահածոների արտադրության մեջ հարկավոր է պահպանել հետեւյալ

պահանջները՝

ա) հերթափոխի ժամանակ, ինչպես նաև սարքավորումը կարգավորելուց, վերանորոգելուց կամ պահեստամասերը փոխելուց հետո ամենաքիչը 3 անգամ փորձարկվում է պահածոների համար նախատեսված սպառողական տարայի հերմետիկությունը.

բ) սպառողական տարայի հերմետիկացումից մինչև պահածոները ջերմային մշակման ենթարկելու ժամանակահատվածը չպետք է գերազանցի 30 րոպեն.

գ) պահածոների արտադրության տեխնոլոգիական պրոցեսի տեւողությունը՝ սկսած սպանդային մթերքը մասերի բաժանելուց եւ մանրացնելուց մինչև դրա մանրէազերծումը կամ պաստերացումը, մանրէազերծված պահածոների համար չպետք է գերազանցի 2, իսկ պաստերացված պահածոների համար՝ 1 ժամը՝ առանց հաշվի առնելու աղադրման պրոցեսի ժամանակահատվածը.

դ) թերխաշ հումքի ջերմաստիճանը մինչև սպառողական տարայի մեջ կշռաձրարելը պետք է լինի $+40^{\circ}\text{C}$ -ից ոչ պակաս.

ե) արտադրողը պահածոները ջերմային մշակման է ենթարկում մանրէազերծման կամ պաստերացման ռեժիմներին համապատասխան, որոնցով ապահովվում է պատրաստի արտադրանքի անվտանգությունը՝ համաձայն սույն Տեխնիկական կանոնակարգի 2-րդ հավելվածով նախատեսված արդյունաբերական մանրէազերծության պահանջների.

զ) արտադրողի կողմից պահածոների պիտանելիության ժամկետը սահմանվում է՝ հաշվի առնելով պահածոների խմբերը, օգտագործված սպառողական փաթեթվածքի հատկությունները եւ մանրէազերծման համար ձեռք բերված ազդեցության չափը.

է) այն փաստաթղթերը, որոնցում ընդգրկված են մանրէազերծման կամ պաստերացման պարամետրերը, որոնք ձայնագրված են տեղեկակիրների վրա,

համարվում են շատ կարեւոր փաստաթղթեր եւ արտադրողի կողմից պետք է պահվեն արտադրանքի պիտանելիության ժամկետը 3 ամսից ոչ պակաս ժամանակով գերազանցող ժամանակահատվածով:

ը) արտադրողի պահեստում պահածոների պահպանման տեւողությունը չպետք է լինի 11 օրից պակաս՝ միկրոկենսաբանական կայունության եւ անվտանգությունը սահմանելու նպատակով:

76. Մինչեւ մեկ տարեկան երեխաների համար նախատեսված մսամթերքի արտադրությունն իրականացվում է մասնագիտացված արտադրական օբյեկտներում կամ մասնագիտացված արտադրամասերում կամ մասնագիտացված տեխնոլոգիական հոսքագծերով:

77. Մեկից երեք տարեկան եւ նախադպրոցական ու դպրոցական տարիքի երեխաների համար նախատեսված մսամթերքի արտադրությունը կարող է իրականացվել մասնագիտացված արտադրական օբյեկտներում կամ մասնագիտացված արտադրամասերում կամ մասնագիտացված տեխնոլոգիական հոսքագծերով կամ ընդհանուր կիրառության մսամթերքի արտադրության համար նախատեսված տեխնոլոգիական սարքավորումներով՝ հերթափոխի սկզբին կամ առանձին հերթափոխով՝ սարքավորումները լվանալուց եւ ախտահանելուց հետո:

78. Բոլոր տարիքային խմբերի երեխաների մանկական սննդի համար նախատեսված մսամթերքի արտադրության մեջ չի թույլատրվում ֆոսֆատների, համի եւ բույրի ուժեղացուցիչների, բենզոյաթթւոնների եւ սորբինաթթւոնների ու դրանց աղերի օգտագործումը, ինչպես նաեւ այն համակցված սննդային հավելումների օգտագործումը, որոնց բաղադրության մեջ առկա են ֆոսֆատները, համի ու բույրի ուժեղացուցիչները, բենզոյաթթւոնները եւ սորբինաթթւոններն ու դրանց աղերը:

79. Բոլոր տարիքային խմբերի երեխաների մանկական սննդի համար նախատեսված մսամթերքի արտադրության մեջ չի թույլատրվում այն պարենային

(սննդային) հումքի օգտագործումը, որում պարունակվում են գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմներ (ԳՁՕ):

80. Բոլոր տարիքային խմբերի երեխաների մանկական սննդի համար նախատեսված մսամթերքի արտադրության մեջ չի թույլատրվում այն պարենային (սննդային) հումքի օգտագործումը, որն ստացվել է այն պեստիցիդների օգտագործման արդյունքում, որոնք նշված են «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգում (ՄՄ ՏԿ 021/2011):

81. 6 ամսականից մինչեւ 3 տարեկան երեխաների համար նախատեսված մսամթերքի արտադրության մեջ չի թույլատրվում այն պարենային (սննդային) հումքի օգտագործումը, որի ցանկը սահմանված է «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով (ՄՄ ՏԿ 021/2011).

82. Նախադպրոցական տարիքի (3-6 տարեկան) եւ դպրոցական տարիքի (6 տարեկան եւ ավելի) երեխաների համար նախատեսված մսամթերքի արտադրության մեջ չի թույլատրվում այն պարենային (սննդային) հումքի օգտագործումը, որի ցանկը սահմանված է «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով (ՄՄ ՏԿ 021/2011):

83. Բոլոր տարիքային խմբերի երեխաների մանկական սննդի համար նախատեսված մսամթերքի արտադրության մեջ չի թույլատրվում այն սպանդային մթերքի օգտագործումը, որում ֆոսֆորի ընդհանուր պարունակությունը 0,2 տոկոսից ավելի է:

84. Նախադպրոցական տարիքի (3-6 տարեկան) եւ դպրոցական տարիքի (6 տարեկան եւ ավելի) երեխաների համար նախատեսված մսամթերքի արտադրության մեջ չի թույլատրվում այն թարմ կամ սառեցված արյան օգտագործումը, որը բերվել է այլ արտադրական օբյեկտներից:

85. Բոլոր տարիքային խմբերի երեխաների մանկական սննդի համար նախատեսված պահածոների արտադրության մեջ մանրէաբանական

կայունություն եւ անվտանգություն սահմանելու նպատակով արտադրողի պահեստում դրանց գտնվելու տեղությունը չպետք է 21 օրից պակաս լինի:

86. Նախադպրոցական տարիքի (3-6 տարեկան) եւ դպրոցական տարիքի (6 տարեկան եւ ավելի) երեխաների մանկական սննդի համար նախատեսված աղացած մսի (միս պարունակող) արտադրության բոլոր փուլերում մսի խճողակի ջերմաստիճանը չպետք է $+3^{\circ}\text{C}$ -ից ավելի լինի:

87. 6 ամսականից մինչեւ 3 տարեկան երեխաների մանկական սննդի համար նախատեսված պահածոների արտադրության մեջ չափաճրարումը կատարվում է 0,25 դմ3 -ից ոչ ավելի սպառողական տարաներով:

IX. Սպանդային մթերքի եւ մսամթերքի պահպանման,
փոխադրման, իրացման եւ ուտիլիզացման պրոցեսներին
ներկայացվող պահանջները

88. Սպանդային մթերք եւ մսամթերք պատրաստողները, վաճառողները եւ օտարերկրյա պատրաստողների գործառույթներն իրականացնող անձինք պարտավոր են դրանց պահպանման, փոխադրման, իրացման պրոցեսներն այնպես իրականացնել, որ տվյալ արտադրանքը համապատասխանի սույն Տեխնիկական կանոնակարգի եւ Մաքսային միության տեխնիկական այն կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրանց վրա:

89. Սպանդային մթերքի եւ մսամթերքի պահպանման, փոխադրման ու իրացման պրոցեսները պետք է համապատասխանեն սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին, ինչպես նաեւ «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին (ՄՄ ՏԿ 021/2011):

90. Սպանդային մթերքի եւ մսամթերքի ուտիլիզացման պրոցեսները պետք է համապատասխանեն «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային

միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին (ՄՄ ՏԿ 021/2011):

91. Սպանդային մթերքի եւ մսամթերքի պահպանման, փոխադրման եւ իրացման պրոցեսի ժամանակ դրանց հետ շփման մեջ գտնվող նյութերը պետք է համապատասխանեն սննդամթերքի հետ շփման մեջ գտնվող նյութերի համար նախատեսված անվտանգության պահանջներին:

92. Թարմ եւ պաղեցված միսը (մսեղիքը, կիսամսեղիքը, քառորդված մսեղիքը) պահպանման պրոցեսի ժամանակ գտնվում է ուղղաձիգ կախված վիճակում՝ առանց միմյանց դիպչելու:

93. Սառնարանային խցիկներում արտադրանքը տեղավորում են դարակաշարի կամ տակնոցի վրա՝ իրար վրա դարսելով, որոնք պետք է հատակից 8-10 սանտիմետրից ոչ պակաս բարձրություն ունենան: Արտադրանքը պետք է պատերից եւ սառեցնող սարքավորումներից 30 սմ-ից ոչ պակաս հեռավորության վրա գտնվի: Դարսվածքների միջեւ պետք է ազատ տարածք լինի, որը հնարավորություն կտա անարգել մոտենալու արտադրանքին:

94. Սառնարանային խցիկները սպանդային մթերքի եւ մսամթերքի սառնարանային մշակման ու պահպանման համար սարքավորվում են ջերմաչափերով եւ (կամ) խցիկում ջերմաստիճանը վերահսկող ավտոմատ միջոցներով, ինչպես նաեւ ջերմաստիճանը գրանցող միջոցներով:

95. Պահպանման պրոցեսի ժամանակ սպանդային մթերքը խմբավորվում է ըստ տեսակի, նշանակության (իրացման կամ վերամշակման(մշակման)) եւ ջերմային վիճակի (պաղեցված, սառեցված):

96. Պահպանման պրոցեսի ժամանակ սպանդային մթերքի բեռնման կամ բեռնաթափման ընթացքում սառնարանային խցիկներում չի թույլատրվում, որ օդի ջերմաստիճանը բարձրանա ավելի քան 5°C-ով, իսկ պահպանման, փոխադրման եւ իրացման պրոցեսի ժամանակ օդի ջերմաստիճանի տատանումը չպետք է գերազանցի 2°C-ը:

97. Մինչեւ տրանպորտային միջոց եւ (կամ) բեռնարկը բեռնելը պաղեցված

եւ սառեցված արտադրանքի պահպանումը չսառեցվող տարածքներում չի թույլատրվում:

98. Փոխադրման պրոցեսի ժամանակ մսեղիքը, կիսամսեղիքը եւ քառորդված մսեղիքը տեղափոխում են ուղղաձիգ կախված վիճակում՝ բացառելով միմյանց դիպչելը: Սառեցված վիճակում գտնվող մսեղիքը, կիսամսեղիքը եւ քառորդված մսեղիքը թույլատրվում է փոխադրել իրար վրա դարսված՝ բացառելով մսեղիքի արտաքին մակերեսի աղտոտումը:

99. Չի թույլատրվում սպանդային մթերքի եւ մսամթերքի փոխադրման համար օգտագործել այն տրանսպորտային միջոցներն ու բեռնարկղերը, որոնցով նախապես փոխադրվել են մթերատու կենդանիները:

Մթերատու կենդանիների փոխադրումն արտադրական օբյեկտ իրականացվում է մասնագիտացված կամ հատուկ սարքավորած տրանսպորտային միջոցով:

Սպանդային մթերքի եւ մսամթերքի փոխադրման համար նախատեսված տրանսպորտային միջոցներն ու բեռնարկղերը սարքավորվում են այնպիսի միջոցներով, որոնք հնարավորություն են տալիս պահպանելու եւ գրանցելու սահմանված ջերմաստիճանային ռեժիմը:

100. Չի թույլատրվում սպանդային մթերքը եւ մսամթերքը փոխադրել իրար վրա լցրած՝ չօգտագործելով տրանսպորտային եւ (կամ) սպառողական փաթեթվածքներ՝ բացառությամբ դոնդողանյութի արտադրության համար նախատեսված ոսկորների:

101. Փոխադրման պրոցեսն ավարտելուց հետո տրանսպորտային միջոցները եւ բեռնարկղերը ենթարկվում են սանիտարական մշակման (ախտահանման):

102. Պահպանման, փոխադրման եւ իրացման պրոցեսի ժամանակ չի թույլատրվում սառեցված սպանդային մթերքն ու մսամթերքը հալեցնել:

103. Մանրաձախ եւ մեծաձախ առետուր իրականացնող

ձեռնարկություններում նախկինում վակուումային փաթեթավորմամբ կամ փոփոխված մթնոլորտային պայմաններում փաթեթավորված սպանդային մթերքը կամ մսամթերքը չի թույլատրվում կրկնակի փաթեթավորման ենթարկել վակուումային կամ փոփոխված մթնոլորտային պայմաններում:

X. Սպանդային մթերքի եւ մսամթերքի փաթեթվածքին

ներկայացվող պահանջները

104. Սպանդային մթերքի եւ մսամթերքի փաթեթավորումը (այդ թվում՝ խցանափակման միջոցները) պետք է համապատասխանի «Փաթեթվածքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին (ՄՄ ՏԿ 005/2011):

105. Մաքսային միության մաքսային տարածքում սպանդային մթերքի եւ մսամթերքի շրջանառության ու դրանց պիտանելիության ժամկետի ընթացքում սպանդային մթերքի եւ մսամթերքի հետ շփման մեջ գտնվող նյութերը պետք է ապահովեն այդ մթերքների անվտանգությունն ու նույնականացման հատկանիշների անփոփոխությունը:

XI. Սպանդային մթերքի եւ մսամթերքի մականշվածքին

ներկայացվող պահանջները

106. Սպանդային մթերքի եւ մսամթերքի մականշումը պետք է համապատասխանի «Սննդամթերքի մականշման մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին (ՄՄ ՏԿ 022/2011), ինչպես նաեւ սույն Տեխնիկական կանոնակարգի 107- 126-րդ կետերով սահմանված պահանջներին:

107. Սպառողներին (ձեռք բերողներին) ապակողմնորոշող գործողություններից զերծ պահելու նպատակով՝

ա) մականշումը, որում տեղեկություն է պարունակվում սպանդային մթերքի եւ

մասամբերքի տարբերակիչ հատկանիշների մասին, (օրինակ՝ «բարձրորակ միս», «մարմարե միս», «խալյալ միս», «կոշեր միս») պետք է համապատասխանի «Սննդամթերքի մականշման մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին (ՄՄ ՏԿ 022/2011)։

բ) չի թույլատրվում ընդհանուր կիրառման մասամբերքը մականշել՝ օգտագործելով այնպիսի հորինված անվանումներ, որոնք ասոցացվում են մանկական սննդի համար նախատեսված մասամբերքի հետ (օրինակ՝ նրբերշիկ «Դետսկիե», երշիկ «Կառապուզիկ», «Կռեպիշ», «Տոպոիժկա»)։

գ) չի թույլատրվում մասամբերքը մականշել՝ օգտագործելով այնպիսի հորինված անվանումներ, որոնք շփոթելու աստիճան նույնական կամ նման են մասամբերքի համար միջպետական (տարածաշրջանային) չափանիշներով սահմանված հորինված անվանումներին՝ բացառությամբ հետեւյալ չափանիշներով թողարկվող մասամբերքի (օրինակ՝ «Բժշկական», «Սիրողական», «Մոսկովյան», «Հատիկավոր», «Կաթնային»)։

դ) թույլատրվում է օգտագործել անատոմիական հատկանիշներով պայմանավորված համընդհանուր անվանումներ, (օրինակ՝ «կրծքամիս», «բեկոն», «վզիկ», «սրունքի միս»), որոնք բնորոշ են կտրվածքի վրայի նկարին (օրինակ՝ «սերվելատ», «սալամի», «խոզապուխտային»)՝ ի նկատի ունենալով բաղադրագրի համաձայն օգտագործված (օրինակ՝ «խոզի մսի», «տավարի մսի», «խոզի մսից», «տավարի մսից») կամ խոհարարության եւ հասարակական սննդի ոլորտում լայնորեն կիրառվող բաղադրամասերը (օրինակ՝ «պաստրոմա», «բալիկ», «կուպատի», «բիֆշտեքս»)։

108. Մասամբերքի մականշվածքի մեջ չի թույլատրվում օգտագործել «արտադրված է պաղեցված հումքից» բառերը կամ իմաստով մոտ նման բառեր, որոնք հնարավոր է օգտագործվեն ջերմային այլ վիճակում գտնվող մասամբերքի կամ սպանդային մթերքի պատրաստման մեջ՝ բացառությամբ պաղեցվածի։

109. Մասամբերքի անվանման մեջ նշվում կամ անվանմանը կից

տեղեկություն է տեղադրվում մասմթերքի խմբի (օրինակ՝ «մսային», «միս պարունակող», «մսաբուսական», «բուսամսային») եւ տեսակի մասին (օրինակ՝ «երշիկեղեն», «մսային արտադրանք», «կիսապատրաստվածք», «խոհարարական արտադրատեսակ», «պահածոներ», «խոզի ճարպից ստացված մթերք», «չոր մթերք», «արգանակ»):

110. Մեխանիկական եղանակով ոսկրահանված (լրացուցիչ ոսկրահանման ենթարկված) մսի օգտագործմամբ մասմթերք պատրաստելու դեպքում դրա մասին նշվում է նմանօրինակ արտադրանքի բաղադրության մեջ (օրինակ՝ մեխանիկական եղանակով ոսկրահանված միս):

111. Նմանօրինակ արտադրանքի բաղադրության մեջ մտնող մասմթերքի մականշվածքում նշվում է դրանցում առկա ջրի մասին՝ այն ավելացնելու ցանկացած եղանակի դեպքում (սառույցի, աղաջրի, լուծույթի տեսքով եւ այլն):

112. Նմանօրինակ արտադրանքի բաղադրության մեջ մտնող մասմթերքի մականշվածքում չպետք է համակցված սննդային հավելումների անվանումներ լինեն, ինչպես նաեւ թթուների ու լուծույթների անվանումներ՝ առանց դրանցում պարունակվող բաղադրամասերը նշելու:

113. Նմանօրինակ արտադրատեսակների եւ արտադրանքի բաղադրության մեջ մտնող երշիկեղենի եւ մսային արտադրանքի մականշվածքում նշվում է միկրոօրգանիզմների մեկնարկային կուլտուրաների առկայության մասին, եթե երշիկեղենի եւ մսային արտադրանքի արտադրության մեջ օգտագործվել են միկրոօրգանիզմների մեկնարկային կուլտուրաներ:

114. Նմանօրինակ արտադրատեսակների եւ արտադրանքի բաղադրության մեջ մտնող եւ ֆերմենտային պատրաստուկներով մշակված սպանդային մթերքի ու մասմթերքի մականշվածքում պետք է տեղեկություններ լինեն այդ պատրաստուկների օգտագործման մասին, եթե պատրաստի մթերքում պահպանվում է ֆերմենտային պատրաստուկի ակտիվությունը, այդ թվում՝ մնացորդայինը:

115. Վակուումով կամ փոփոխված մթնոլորտային պայմաններում փաթեթավորված սպանդային մթերքի եւ մսամթերքի մականշվածքում պետք է համապատասխան տեղեկություններ լինեն (օրինակ՝ «փաթեթավորված է վակուումով», «փաթեթավորված է փոփոխված մթնոլորտային պայմաններում»):

116. Այն դեպքում, երբ մանրածախ եւ մեծածախ առեւտուր իրականացնող ձեռնարկություններում իրացման համար նախատեսված սպանդային մթերք եւ մսամթերք պատրաստողն առաջարկում է, որ դրանք հետագայում իրացման ժամանակ փաթեթավորվեն սպառողական փաթեթվածքով եւ որ փոխվի դրանց քանակությունը եւ (կամ) դրանց փաթեթվածքի ձեւը, ապա տվյալ սպանդային մթերքի ու մսամթերքի մականշվածքում պետք է տեղեկություններ լինեն պիտանելիության ժամկետների մասին՝ մինչեւ փաթեթվածքը բացելը եւ փաթեթվածքը բացելուց (դրա ամբողջականությունը վնասելուց) հետո, սակայն ընդհանուր ժամկետի սահմաններում:

Սպանդային մթերքի եւ մսամթերքի մականշվածքում այդ տեղեկության բացակայության դեպքում մանրածախ եւ մեծածախ առեւտուր իրականացնող ձեռնարկություններում իրացման համար նախատեսված սպանդային մթերքի եւ մսամթերքի քանակության եւ (կամ) դրանց փաթեթվածքի ձեւի փոփոխություն չի թույլատրվում:

Իրացման պրոցեսի ժամանակ դրանց քանակության փոփոխությամբ եւ (կամ) փաթեթվածքի ձեւափոխմամբ փաթեթավորված սպանդային մթերքի ու մսամթերքի մականշվածքի մեջ պետք է լրացուցիչ նշվի դրանց փաթեթավորման ամսաթիվը եւ պիտանելիության ժամկետը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ մանրածախ եւ մեծածախ առեւտուր իրականացնող ձեռնարկություններում սպանդային մթերքն ու մսամթերքը փաթեթավորվում են սպառողի ներկայությամբ:

117. Մսեղիքի, կիսամսեղիքի, քառորդված մսեղիքի եւ մսի կտորների մականշումը պետք է համապատասխանի սույն Տեխնիկական կանոնակարգի 106-

116-րդ կետերով սահմանված պահանջներին, ինչպես նաև հետեւյալ պահանջներին՝

ա) անմիջականորեն մսեղիքի, կիսամսեղիքի, քառորդված մսեղիքի վրա դրվում է անասնաբուժական դրոշմի արտատիպ՝ անասնաբուժական ոլորտում անդամ պետությունների կողմից սահմանված նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան.

բ) անմիջականորեն մսեղիքի, կիսամսեղիքի, քառորդված մսեղիքի վրա թույլատրվում է լրացուցիչ կարգով ապրանքագիտական դրոշմի արտատիպ դնել.

գ) ապրանքին կից ներկայացվող փաստաթղթերում չփաթեթավորված սպանդային մթերքի դեպքում նշվում են հետեւյալ տեղեկությունները՝

մթերատու կենդանու մսի տեսակի, որից ստացվել է սպանդային մթերքը, սպանդային մթերքի անվանման, մսեղիքի, կիսամսեղիքի, քառորդված մսեղիքի եւ մսի կտորների ջերմային վիճակի («պաղեցված», «սառեցված»), մսեղիքի անատոմիական հատվածի (մսի կտորների համար) մասին.

սպանդային մթերք պատրաստողի անվանման եւ գտնվելու վայրի մասին.

սպանդային մթերքի քանակության մասին.

սպանդային մթերքի արտադրման ամսաթվի, պիտանելիության ժամկետի եւ պահպանման պայմանների մասին:

Տրանսպորտային եւ (կամ) սպառողական փաթեթվածքի առկայության դեպքում վերոնշյալ տեղեկությունները նշվում են մականշվածքում եւ (կամ) ապրանքին կից ներկայացվող փաստաթղթերում:

118. Ենթամթերքի մակնշումը պետք է համապատասխանի սույն Տեխնիկական կանոնակարգի 106-116-րդ կետերով սահմանված պահանջներին, ինչպես նաև հետեւյալ պահանջներին՝

ա) տրանսպորտային փաթեթվածքի վրա դրվում է անասնաբուժական դրոշմի արտատիպ՝ անասնաբուժության ոլորտում անդամ պետությունների

կողմից սահմանված նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան.

բ) մականշվաձքում տեղեկություններ են նշվում ջերմային վիճակի (օրինակ՝ «պաղեցված», «սառեցված»), ենթամթերքի անվանման եւ այն մթերատու կենդանու տեսակի մասին, որից ստացվել է սպանդային մթերքը.

գ) մականշվաձքում (առկայության դեպքում) տեղեկություններ են նշվում ենթամթերքի կատեգորիայի մասին (օրինակ՝ «տավարի պաղեցված լյարդ՝ 1-ին կատեգորիայի»):

119. Մսի եւ ենթամթերքի սառեցված բլոկների մականշումը պետք է համապատասխանի սույն Տեխնիկական կանոնակարգի 106-116-րդ կետերով սահմանված պահանջներին, ինչպես նաեւ հետեւյալ պահանջներին՝

ա) տրանսպորտային փաթեթվաձքի վրա դրվում է անասնաբուժական դրոշմի արտատիպ՝ անասնաբուժության ոլորտում անդամ պետությունների կողմից սահմանված նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան.

բ) մականշվաձքում տեղեկություններ են նշվում ենթամթերքի անվանման մասին եւ այն մթերատու կենդանու մսի կամ ենթամթերքի տեսակի մասին, որից ստացվել է սպանդային մթերքը, ինչպես նաեւ տեղեկություններ շարակցական եւ ճարպային հյուսվածքների զանգվածային բաժնի վերաբերյալ (ջլազերծված մսի դեպքում).

գ) մականշվաձքում (առկայության դեպքում) տեղեկություններ են նշվում ենթամթերքի կատեգորիայի (օրինակ՝ «տավարի պաղեցված լյարդի բլոկ՝ 1-ին կատեգորիայի») մասին:

120. Կիսապատրաստվածքների եւ խոհարարական արտադրատեսակների մականշումը պետք է համապատասխանի սույն Տեխնիկական կանոնակարգի 106-116-րդ կետերով սահմանված պահանջներին, ինչպես նաեւ հետեւյալ պահանջներին՝

ա) մականշվաձքում տեղեկություններ են նշվում մսամթերքի խմբի («մսային», «միս պարունակող»), մսամթերքի տեսակի մասին («կիսապատրաստվածք», «խոհարարական արտադրատեսակ»), կիսապատրաստվածքների եւ խոհարարական արտադրանքի տեսակի («աղացած», «խմորի մեջ», «լցոնած», «խճողակ», «կաղապարված», «մեծ կտորներով», «փշրապատած»), «փոքր կտորներով»), ինչպես նաեւ ջերմային վիճակի վերաբերյալ («պաղեցված» կիսապատրաստվածքների դեպքում չափման ցանկացած կետում $-1,5^{\circ}\text{C}$ -ից մինչեւ $+6^{\circ}\text{C}$ ջերմաստիճան, «սառեցված» կիսապատրաստվածքների եւ խոհարարական արտադրատեսակների դեպքում չափման ցանկացած կետում -8°C -ից ոչ ավելի ջերմաստիճան)։

բ) սառեցված սպանդային մթերքից պաղեցված արտադրանք պատրաստելիս տվյալ արտադրանքի մականշվաձքում նշվում է դրա մասին (օրինակ՝ «պատրաստված է սառեցված հումքից»)։

գ) մականշվաձքում (առկայության դեպքում) տեղեկություններ են նշվում կիսապատրաստվածքների կատեգորիայի մասին։

դ) մականշվաձքում հնարավոր է լրացուցիչ կարգով տեղեկություններ նշվեն կիսապատրաստվածքների եւ խոհարարական արտադրատեսակների մասին (օրինակ՝ «փշրապատած»), «խավարտով», «առանց խավարտի», «նրբաբլիթներ», «պելմենի», «մանթի»)։

121. Երշիկեղենի, մսամթերքի եւ խոզի ճարպից ստացված մթերքի մականշումը պետք է համապատասխանի սույն Տեխնիկական կանոնակարգի 106-116-րդ կետերով սահմանված պահանջներին, ինչպես նաեւ հետեւյալ պահանջներին՝

ա) մականշվաձքում տեղեկություններ են նշվում մսամթերքի խմբի («մսային», «միս պարունակող», «մսաբուսական», «բուսամսային»), մսամթերքի տեսակի մասին («երշիկեղեն», «մսային արտադրանքի», «խոզի ճարպից ստացված մթերք»), տեխնոլոգիական մշակման եղանակի («եփած», «ապխտած»,

«կիսաապխտած», «եփած-ապխտած», «հում ապխտած», «հում թորշոմած», «խորոված», «ապխտած- խորոված», «եփած- խորոված», «տապակած», «աղադրված»).

բ) սառեցված մթերքի մականշվաձքում տեղեկություններ են նշվում ջերմային վիճակի մասին («սառեցված»).

գ) մականշվաձքում (առկայության դեպքում) տեղեկություններ են նշվում երշիկեղենի, մսային արտադրանքի եւ խոզի ճարպից ստացված մթերքի կատեգորիայի կամ կարգի մասին.

դ) երշիկեղենի մականշվաձքում հնարավոր է լրացուցիչ կարգով տեղեկություններ նշվեն երշիկեղենի մասին (օրինակ՝ «երշիկ», «փոքր երշիկ», «նրբերշիկ», «սարդեկա», «սարդեկա՝ խոզի ճարպի լցոնմամբ», «հացանման երշիկ»).

ե) մսային արտադրանքի մականշվաձքում, ելնելով դրա անատոմիական հատկանիշներից, հնարավոր է լրացուցիչ կարգով տեղեկություններ նշվեն մսային արտադրանքի մասին (օրինակ՝ «կրծքամիս», «բեկոն», «վզիկ», «սրունքի միս»).

122. Պահածոների մակնշումը պետք է համապատասխանի սույն Տեխնիկական կանոնակարգի 106-116-րդ կետերով սահմանված պահանջներին, ինչպես նաեւ հետեւյալ պահանջներին՝

ա) մականշվաձքում տեղեկություններ են նշվում մսամթերքի խմբի («մսային», «միս պարունակող», «մսաբուսական», «բուսամսային»), մսամթերքի տեսակի («պահածոներ») եւ տեխնոլոգիական մշակման եղանակի մասին («մանրէազերծված», «պաստերացված»).

բ) մականշվաձքում տեղեկություններ են նշվում պահածոների տեսակի մասին («կտորներով», «աղացած», «խճողակային», «պաշտետային», «խոզապուխտային»).

գ) մականշվաձքում (առկայության դեպքում) տեղեկություններ են նշվում պահաճոների կարգի մասին.

դ) մինչեւ պիտանելիության ժամկետի ավարտը տեղեկության պահպանվածությունն ու ընթերցելիությունն ապահովող եղանակով (վիմատպության, ֆլեքսոգրաֆիա կամ օֆսեթային տպագրության այլ եղանակ) սպառողական փաթեթվաձքի վրա մակնշում կատարելու անհնարինության դեպքում պահաճոների արտադրման ամսաթիվը, տեսականու արտադրական համարը (առկայության դեպքում) նշվում է սպառողական փաթեթվաձքի վերին կամ ստորին մասում կամ պիտակի վրա:

123. Չոր մթերքների եւ արգանակների մակնշումը պետք է համապատասխանի սույն Տեխնիկական կանոնակարգի 106-116-րդ կետերով սահմանված պահանջներին, ինչպես նաեւ հետեւյալ պահանջներին՝

ա) չոր մթերքների մականշվաձքում տեղեկություններ են նշվում մսամթերքի խմբի («մսային», «միս պարունակող», «մսաբուսական», «բուսամսային») եւ մսամթերքի տեսակի մասին («չոր մթերք»).

բ) արգանակների մականշվաձքում տեղեկություններ են նշվում մսամթերքի խմբի («մսային»), տեխնոլոգիական մշակման եղանակի («չոր», «պահածոյացված», «հեղուկ») եւ մսամթերքի տեսակի մասին («արգանակ») (օրինակ՝ «մսային խտացված արգանակ»):

124. Կենդանական հալեցրած ճարպերի մակնշումը պետք է համապատասխանի սույն Տեխնիկական կանոնակարգի 106-116-րդ կետերով սահմանված պահանջներին, ինչպես նաեւ հետեւյալ պահանջներին՝

ա) մականշվաձքում տեղեկություններ են նշվում մթերատու կենդանու տեսակի մասին (օրինակ՝ «խոզի հալեցրած ճարպ», «տավարի հալեցրած ճարպ»).

բ) սառեցված մթերքի մականշվաձքում տեղեկություններ են նշվում ջերմային վիճակի մասին («սառեցված»):

125. Դոնդողանյութի մականշումը պետք է համապատասխանի սույն Տեխնիկական կանոնակարգի 106-116-րդ կետերով սահմանված պահանջներին, ինչպես նաև դոնդողանյութի մականշվածքում տեղեկություններ են նշվում դոնդողանյութի տեսակի մասին (առկայության դեպքում):

126. Մանկական սննդի համար նախատեսված սպանդային մթերքի եւ մսամթերքի մականշումը պետք է համապատասխանի սույն Տեխնիկական կանոնակարգի 106-125-րդ կետերով սահմանված պահանջներին, ինչպես նաև հետեւյալ պահանջներին՝

ա) մականշվածքում տեղեկություններ են նշվում մանկական սննդի համար նախատեսված այդ արտադրանքի բնորոշման մասին («վաղ տարիքի երեխաների համար», «նախադպրոցական տարիքի երեխաների համար», «դպրոցական տարիքի երեխաների համար») կամ տեղեկություն է պարունակվում երեխայի կոնկրետ տարիքի մասին, որից սկսած տվյալ արտադրանքը կարելի է օգտագործել (օրինակ՝«6 տարեկանից բարձր երեխաների սննդի համար»).

բ) մանկական սննդի համար նախատեսված մսամթերքի մականշվածքում տեղեկություններ են նշվում սպառողական փաթեթվածքի ամբողջականությունը վնասելուց հետո դրա պիտանելիության ժամկետի եւ պահպանման մասին.

գ) մականշվածքում (առկայության դեպքում) տեղեկություններ են նշվում մսամթերքի դասի մասին.

դ) երեխաների՝ կյանքի առաջին տարվա համար նախատեսված մսամթերքի մականշվածքում տեղեկություններ են նշվում երեխայի այն տարիքի մասին (ամիսներով), որից սկսած թույլատրվում է երեխայի սննդակարգում ընդգրկել տվյալ մթերքը եւ տվյալ մթերքի մանրացվածության աստիճանի մասին (օրինակ՝«հոմոգենացված», «խյուսանման», «խոշոր կտորներով մանրացված»), ինչպես նաև առաջարկություններ են նշվում դրա օգտագործման վերաբերյալ:

XII. Սպանդային մթերքի եւ մսամթերքի համապատասխանեցման
ապահովումը անվտանգության պահանջներին

127. Սպանդային մթերքի եւ մսամթերքի համապատասխանեցումը սույն Տեխնիկական կանոնակարգին ապահովվում է դրա պահանջների եւ Մաքսային միության տեխնիկական այն կանոնակարգերի պահանջների կատարմամբ, որոնց գործողությունը տարածվում է տվյալ արտադրանքի վրա:

128. Հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների մեթոդները սահմանվում են այն ստանդարտների համաձայն, որոնք համապատասխանում են ստանդարտների ցանկին, որոնք պարունակում են սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջները կիրառելու եւ կատարելու ու արտադրանքի համապատասխանության գնահատում (հավաստում) իրականացնելու համար անհրաժեշտ՝ հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններ ու մեթոդներ, ինչպես նաեւ նմուշառման կանոններ:

XIII. Սպանդային մթերքի եւ մսամթերքի

համապատասխանեցման գնահատումը (հավաստումը)

129. Սպանդային մթերքի եւ մսամթերքի ու դրանց արտադրության, պահպանման, փոխադրման, իրացման եւ ուտիլիզացման պրոցեսների համապատասխանության գնահատումը (հավաստումը) պետք է համապատասխանի սույն Տեխնիկական կանոնակարգի եւ «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին (ՄՄ ՏԿ 021/2011):

130. Սպանդային մթերքը (այդ թվում՝ մանկական սննդի համար նախատեսված սպանդային մթերքը)՝ մինչ Մաքսային միության մաքսային տարածք շրջանառության մեջ դրվելը, ենթակա է անասնաբուժասանիտարական փորձաքննության:

131. Սպանդային մթերքը անասնաբուժասանիտարական փորձաքննության ենթարկելը (այդ թվում՝ մանկական սննդի համար նախատեսված սպանդային մթերքը) եւ դրա արդյունքների գնահատումն իրականացվում է «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի՝ (ՄՄ ՏԿ 021/2011) անասնաբուժասանիտարական փորձաքննությանն առնչվող պահանջներին համապատասխան:

132. Մսամթերքը (բացառությամբ մանկական սննդի համար նախատեսված մսամթերքի եւ նոր տեսակի մսամթերքի) մինչ Մաքսային միության մաքսային տարածք շրջանառության մեջ դրվելը ենթակա է հայտարարագրման՝ համաձայն սահմանված կարգի:

133. Մսամթերքի համապատասխանության հավաստումը սույն Տեխնիկական կանոնակարգի եւ Մաքսային միության այն տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրա վրա, իրականացվում է հայտատուի կողմից իր եւ կառավարման համակարգի հավաստագրման (վեցաչափ սխեմաների համար) հարցերով զբաղվող մարմնի եւ Մաքսային միության փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) Միասնական ռեեստրում ընդգրկված հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) մասնակցությամբ ձեռք բերված ապացույցների հիման վրա՝ համապատասխանության հայտարարագիրը ընդունելու միջոցով:

134. Մսամթերքի համապատասխանության հայտարարագրումը հայտատուի ընտրությամբ իրականացվում է սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանված՝ հայտարարագրման սխեմաներից որեւէ մեկով:

Համապատասխանության՝ եռաչափ եւ վեցաչափ սխեմաներով հայտարարագրման ժամանակ որպես հայտատու կարող են հանդես գալ անդամ պետությունների օրենսդրության համաձայն նրանց տարածքում որպես իրավաբանական անձ կամ որպես անհատ ձեռնարկատեր գործունեություն ծավալող ֆիզիկական անձ կամ որպես օտարերկրյա պատրաստողի գործառույթ իրականացնող անձ գրանցվածները՝ սույն Տեխնիկական կանոնակարգի եւ տվյալ

մասմթերքի վրա տարածվող Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջների հետ՝ մատակարարվող մասմթերքի համապատասխանության ապահովման մասին կնքված պայմանագրի հիման վրա:

Համապատասխանության՝ քառաչափ սխեմայով հայտարարագրման ժամանակ որպես հայտատու կարող են հանդես գալ անդամ պետությունների օրենսդրության համաձայն նրանց տարածքում որպես իրավաբանական անձ կամ որպես անհատ ձեռնարկատեր գործունեություն ծավալող եւ պատրաստող կամ վաճառող հանդիսացող ֆիզիկական անձ կամ որպես օտարերկրյա պատրաստողի գործառույթ իրականացնող անձ գրանցվածները՝ սույն Տեխնիկական կանոնակարգի եւ տվյալ մասմթերքի վրա տարածվող՝ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջների հետ՝ մատակարարվող մասմթերքի համապատասխանության ապահովման մասին կնքված պայմանագրի հիման վրա:

135. Եռաչափ հայտարարագրման սխեման ներառում է՝

տեխնիկական փաստաթղթերի ձեւակերպում եւ վերլուծություն.

արտադրական հսկողության իրականացում.

մասմթերքի նմուշների փորձարկում.

համապատասխանության հայտարարագրի ընդունում ու գրանցում.

շրջանառության միասնական նշանի զետեղում:

Հայտատուն միջոցներ է ձեռնարկում, որպեսզի արտադրության պրոցեսը լինի կայուն եւ ապահովվի մասմթերքի համապատասխանությունը սույն Տեխնիկական կանոնակարգի եւ Մաքսային միության այն տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրա վրա, ձեւակերպում է տեխնիկական փաստաթղթերն ու անցկացնում է դրանց վերլուծությունը:

Հայտատուն ապահովում է արտադրության վերահսկողության իրականացումը:

Սույն Տեխնիկական կանոնակարգի եւ տվյալ մասմթերքի վրա տարածվող՝ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին մասմթերքի համապատասխանությունը վերահսկելու նպատակով հայտատուն հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում իրականացնում է մասմթերքի նմուշների փորձարկում, որն ընդգրկված է Մաքսային միության հավաստագրման մարմինների ու փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) Միասնական ռեեստրում (այսուհետ՝ Միասնական ռեեստր):

Սերիական արտադրության մասմթերքի համապատասխանության հայտարարագրման գործողության ժամկետը 3 տարուց ոչ ավելի է:

136. Քառաչափ հայտարարագրման սխեման ներառում է՝

տեխնիկական փաստաթղթերի ձեւակերպում եւ վերլուծություն.

մասմթերքի նմուշների փորձարկում.

համապատասխանության հայտարարագրի ընդունում ու գրանցում.

շրջանառության միասնական նշանի զետեղում:

Հայտատուն կազմում է տեխնիկական փաստաթղթերը եւ կատարում է դրանց վերլուծությունը:

Սույն Տեխնիկական կանոնակարգի եւ տվյալ մասմթերքի վրա տարածվող՝ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին մասմթերքի համապատասխանությունը հաստատելու նպատակով հայտատուն հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում իրականացնում է մասմթերքի նմուշների փորձարկում, որն ընդգրկված է Մաքսային միության հավաստագրման մարմինների ու փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) Միասնական ռեեստրում (այսուհետ՝ Միասնական ռեեստր):

Մասմթերքի համապատասխանության հայտարարագրման գործողության ժամկետը համապատասխանում է տվյալ մասմթերքի պիտանելիության ժամկետին:

137. Վեցաչափ հայտարարագրման սխեման ներառում է՝

տեխնիկական փաստաթղթերի ձեւակերպումը եւ վերլուծությունը, որը ներառում է կառավարման համակարգերի հավաստագրման հարցերով զբաղվող մարմնի կողմից տրված որակի եւ անվտանգության կառավարման համակարգի հավաստագիր (դրա պատճենը).

արտադրական հսկողության իրականացում.

մասմթերքի նմուշների փորձարկում.

համապատասխանության հայտարարագրի ընդունում ու գրանցում.

շրջանառության միասնական նշանի զետեղում.

որակի եւ անվտանգության կառավարման համակարգի գործունեության կայունության վերահսկումը:

Հայտատուն միջոցներ է ձեռնարկում, որպեսզի որակի եւ անվտանգության կառավարման համակարգի գործունեությունը լինի կայուն եւ ապահովվի մասմթերքի արտադրության համապատասխանությունը սույն Տեխնիկական կանոնակարգի եւ Մաքսային միության այն տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրա վրա, ձեւակերպում է տեխնիկական փաստաթղթերը եւ անցկացնում է դրանց վերլուծությունը:

Հայտատուն ապահովում է արտադրական վերահսկողությունը եւ կառավարման համակարգում նախատեսվող փոփոխությունների մասին տեղեկացնում է կառավարման համակարգի հավաստագրման մարմնին:

Սույն Տեխնիկական կանոնակարգի եւ տվյալ մասմթերքի վրա տարածվող՝ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին մասմթերքի համապատասխանությունը վերահսկելու նպատակով հայտատուն

հավաստագրված փորձարկման լաբորատորիայում իրականացնում է մասմթերքի նմուշների փորձարկում, որն ընդգրկված է Մաքսային միության հավաստագրման մարմինների ու փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) Միասնական ռեեստրում (այսուհետ՝ Միասնական ռեեստր):

Կառավարման համակարգի հավաստագրման մարմինն իրականացնում է տեսչական վերահսկողություն որակի եւ անվտանգության կառավարման համակարգի գործունեության կայունության նկատմամբ:

Սերիական արտադրության մասմթերքի համապատասխանության հայտարարագրի գործողության ժամկետը չի գերազանցում 5 տարին:

138. Համապատասխանության հայտարարագրման դեպքում ապացուցողական նշանակություն ունեցող նյութերը պետք է ներառեն՝

ա) փաստաթղթերի պատճենները, որոնցով հավաստվում է որպես իրավաբանական անձ կամ անհատ ձեռներեց պետական գրանցումը.

բ) տեխնիկական պայմանները կամ այն փաստաթուղթը, որին համապատասխան պատրաստվել է արտադրանքը (առկայության դեպքում).

գ) այն փաստաթղթերի ցանկը, որոնց համապատասխան պատրաստվել է արտադրանքը.

դ) որակի եւ անվտանգության կառավարման համակարգի վերաբերյալ հավաստագիրը (դրա պատճեն) (վեցաչափ սխեմայի համար).

ե) մասմթերքի փորձաստուգման արձանագրությունները.

զ) սպանդային մթերքի եւ (կամ) ոչ մսային բաղադրամասերի (առկայության դեպքում) փորձաստուգման արձանագրությունները.

է) պայմանագիրը (մատակարարման վերաբերյալ համաձայնագիրը) կամ ապրանքին կից ներկայացվող փաստաթղթերը (քառաչափ սխեմայի համար)՝ առկայության դեպքում.

ը) այլ փաստաթղթեր, որոնցով ուղղակի կամ անուղղակի կերպով հավաստվում է մսամթերքի համապատասխանությունը սույն Տեխնիկական կանոնակարգի եւ Մաքսային միության այն տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրա վրա:

139. Սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության հայտարարագիրը ձեւակերպվում է միասնական ձեւի եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 293 որոշմամբ հաստատված կանոնների համաձայն:

140. Համապատասխանության հայտարարագրի գործողությունն սկսվում է սահմանված կարգով, միասնական ձեւի համաձայն ձեւակերպված եւ տրված համապատասխանության հավաստագրերի ու համապատասխանության գրանցված հայտարարագրերի Միասնական ռեեստրում դրա գրանցման օրվանից:

141. Համապատասխանության հավաստման պրոցեսն ավարտելուց հետո հայտատուն կազմում է մսամթերքի վերաբերյալ փաստաթղթերի փաթեթ, որը ներառում է.

ա) սույն Տեխնիկական կանոնակարգի 138-րդ կետով նախատեսված փաստաթղթերը (տեխնիկական փաստաթղթերը, ապացուցողական նշանակություն ունեցող նյութերը համապատասխանության հայտարարագրման դեպքում).

բ) Մաքսային միության հավաստագրման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) Միասնական ռեեստրում ընդգրկված հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում անցկացված փորձաստուգումների արձանագրությունը (արձանագրությունները).

գ) համապատասխանության՝ գրանցված հայտարարագիրը:

142. Մսամթերքի վերաբերյալ փաստաթղթերի փաթեթը պետք է պահվի հայտատուի մոտ՝

ա) սերիական արտադրության արտադրանքի դեպքում՝ այդ արտադրանքի արտադրությունը դադարեցնելու օրվանից ոչ պակաս, քան 5 տարվա ընթացքում:

բ) արտադրանքի խմբաքանակի դեպքում՝ մսամթերքի խմբաքանակի իրացման օրվանից ոչ պակաս, քան 5 տարվա ընթացքում:

143. Սույն Տեխնիկական կանոնակարգի 141-րդ կետում նշված փաստաթղթերը պետք է ներկայացվեն պետական հսկողության (վերահսկողության) շրջանակներում:

144. Մինչ Մաքսային միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դնելը՝ մանկական սննդի համար նախատեսված մսամթերքը «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով (ՄՄ ՏԿ 021/2011) սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

145. Սպանդային մթերքի եւ մսամթերքի (այդ թվում նաեւ՝ մանկական սննդի համար նախատեսված մսամթերքի եւ սպանդային մթերքի) արտադրության պրոցեսների՝ սույն Տեխնիկական կանոնակարգի եւ Մաքսային միության այն տեխնիկական կանոնակարգերի պահանջների հետ համապատասխանության գնահատումը, որոնց գործողությունը տարածվում է դրանց վրա, կատարվում է մինչ այդ պրոցեսներն իրականացնելը (մինչ արտադրանքը շրջանառության մեջ դնելը) արտադրական օբյեկտների պետական գրանցման եղանակով եւ «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով սահմանված կարգով (ՄՄ ՏԿ 021/2011):

146. Սպանդային մթերքի եւ մսամթերքի (այդ թվում նաեւ՝ մանկական սննդի համար նախատեսված մսամթերքի եւ սպանդային մթերքի) արտադրության, պահպանման, փոխադրման, իրացման եւ ուտիլիզացման պրոցեսների՝ սույն Տեխնիկական կանոնակարգի եւ Մաքսային միության՝ դրանց վրա տարածվող տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության գնահատումը կատարվում է սույն Տեխնիկական կանոնակարգով եւ Մաքսային միության՝ դրանց վրա տարածվող տեխնիկական կանոնակարգերով սահմանված

պահանջներին հետեւելու նկատմամբ իրականացվող պետական հսկողության (վերահսկողության) եղանակով:

XIV. Արտադրանքի շրջանառության միասնական նշանով մականշվածքը
Մաքսային միության անդամ պետությունների շուկայում

147. Արտադրանքի շրջանառության միասնական նշանով մականշումը Մաքսային միության անդամ պետությունների շուկայում իրականացվում է նախքան սպանդային մթերքը եւ մսամթերքը շրջանառության մեջ դնելը:

Սպանդային մթերքը եւ մսամթերքը, որոնք անցել են սույն Տեխնիկական կանոնակարգի եւ Մաքսային միության՝ դրանց վրա տարածվող տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության գնահատում (հավաստում), Մաքսային միության անդամ պետությունների շուկայում պետք է մականշվեն արտադրանքի շրջանառության միասնական նշանով:

148. Սպանդային եւ չփաթեթավորված մթերքի ու մսամթերքի՝ Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մականշվածքը դրվում է ապրանքին կից ներկայացվող փաստաթղթերի վրա:

149. Անմիջականորեն տրանսպորտային փաթեթվածքում զետեղված սպանդային մթերքի եւ մսամթերքի՝ Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մականշվածքը դրոշմվում է տրանսպորտային փաթեթվածքի եւ (կամ) պիտակի, թերթ-ներդրակի վրա, որը դրվում է յուրաքանչյուր տրանսպորտային փաթեթվածքի հետ, կցվում յուրաքանչյուր տրանսպորտային փաթեթվածքին, կամ դրոշմվում ապրանքին կից ներկայացվող փաստաթղթերի վրա:

XV. Սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարման նկատմամբ իրականացվող պետական հսկողությունը (վերահսկողությունը)

150. Սույն Տեխնիկական կանոնակարգի՝ սպանդային մթերքի եւ մսամթերքի, ինչպես նաեւ դրանց հետ կապված արտադրության, պահպանման, փոխադրման, իրացման եւ ուտիլիզացման հետ կապված պահանջների կատարման նկատմամբ պետական հսկողությունը (վերահսկողությունը) իրականացվում է անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

XVI Երաշխիքային վերապահումը

151. Անդամ պետությունների լիազոր մարմինները պարտավոր են ձեռնարկել բոլոր միջոցները սպանդային այն մթերքի ու մսամթերքի՝ Մաքսային միության տարածքում շրջանառության մեջ դնելը սահմանափակելու կամ արգելելու, ինչպես նաեւ դրանք շրջանառությունից հանելու համար, որոնք չեն համապատասխանում սույն Տեխնիկական կանոնակարգի եւ Մաքսային միության այն տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրանց վրա:

Այդ դեպքում անդամ պետության լիազոր մարմինը պարտավոր է մյուս անդամ պետությունների լիազոր մարմիններին տեղեկացնել համապատասխան որոշում կայացնելու մասին՝ նշելով այն ընդունելու պատճառները եւ ներկայացնելով ապացույցներ, որոնցով պարզաբանվում է տվյալ միջոցները ձեռնարկելու անհրաժեշտությունը:

Հավելված թիվ 1

«Մսի եւ մսամթերքի անվտանգության մասին»

Մաքսային միության

տեխնիկական կանոնակարգի

(ՄՄ ՏԿ 034/2013)

ՍՊԱՆԴԱՅԻՆ ՄԹԵՐՔԻ ԵՎ ՄՍԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ

ՄԻԿՐՈԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ

Արտադրանքի անվանումը	Ցուցանիշները	Թույլատրելի մակարդակները, ոչ ավելի	Ծանոթագրություն
1	2	3	4

I. Միս՝ թարմ, պաղեցված եւ սառեցված: Կիսապատրաստվածքներ՝ պաղեցված եւ սառեցված (մթերատու կենդանիների բոլոր տեսակները)

1. Միս՝ թարմ եւ պաղեցված

ա) թարմ մսեղիք,
կիսամսեղիք, քառորդված
մսեղիք, մսի կտորներ

մեզոֆիլային աերոբ եւ ֆակուլտատիվ
անաերոբ միկրոօրգանիզմների քանակը,
ԳԱՄ*/գ, ոչ ավելի

10

աղիքային ցուպիկների խմբի մանրէները
(կոլիձեները) 1 գրամում

չի թույլատրվում

Արտադրանքի անվանումը	Ցուցանիշները	Թույլատրելի մակարդակները, ոչ ավելի	Ծանոթագրություն
1	2	3	4
բ) թարմ մսեղիք, կիսամսեղիք, քառորդված մսեղիք, մսի կտորներ՝ մանկական սննդի համար	մեզոֆիլային աերոբ եւ ֆակուլտատիվ անաերոբ միկրոօրգանիզմների քանակը, ԳԱՄ*/գ, ոչ ավելի աղիքային ցուպիկների խմբի մանրէները (կոլիձեւերը) 1 գրամում	10 չի թույլատրվում	
գ) պաղեցված մսեղիք, կիսամսեղիք, քառորդված մսեղիք, մսի կտորներ	մեզոֆիլային աերոբ եւ ֆակուլտատիվ անաերոբ միկրոօրգանիզմների քանակը, ԳԱՄ*/գ, ոչ ավելի աղիքային ցուպիկների խմբի մանրէները (կոլիձեւերը) 0,1 գրամում Proteus խմբի մանրէներ 0,1 գրամում	1×10^3 չի թույլատրվում չի թույլատրվում	7 օրից ավելի պիտանելիության ժամկետ ունեցող արտադրանքի համար
դ) սառեցված մսեղիք, կիսամսեղիք, քառորդված մսեղիք, մսի կտորներ՝ մանկական սննդի համար	մեզոֆիլային աերոբ եւ ֆակուլտատիվ անաերոբ միկրոօրգանիզմների քանակը, ԳԱՄ*/գ, ոչ ավելի աղիքային ցուպիկների խմբի մանրէները (կոլիձեւերը) 0,1 գրամում	1×10^3 չի թույլատրվում	

Արտադրանքի անվանումը	Ցուցանիշները	Թույլատրելի մակարդակները, ոչ ավելի	Ծանոթագրություն
1	2	3	4
դ) պաղեցված մսի կտորներ՝ վակուումային փաթեթավորմամբ կամ փոփոխված գազային մթնոլորտի պայմաններում փաթեթավորված	Proteus խմբի մանրէներ՝ 1 գրամում մեզոֆիլային աերոբ եւ ֆակուլտատիվ անաերոբ միկրոօրգանիզմների քանակը, ԳԱՄ*/գ, ոչ ավելի աղիքային ցուպիկների խմբի մանրէները (կոլիձեւերը) 0,01 գրամում խմորիչներ, ԳԱՄ/գ, ոչ ավելի սուլֆիդ վերականգնող կլոստրիդիաներ 0,01 գրամում	չի թույլատրվում 1×10^4 չի թույլատրվում 1×10^3 չի թույլատրվում	
2. Միս՝ սառեցված՝			
